

15-16(408-409)

14.05.2015

Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գիտարար, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՍԱՐ

Լусар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԻՑ

Lusar

## ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍ ԼԻՆԵՔ ԵՐԱՆՈՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ

Բոլոր ժողովուրդներն էլ, ովքեր գոյատևել են պատմության բառուղիներում, անպայման հաղթահարել են ինքնահաստատման փորձությունները: Եվ ինչքան հին է ժողովուրդը, այնքան հարուստ է նրա մաքառումի պատմությունը՝ լի կորուստների ցավով ու հաղթանակների բերկրանքով: Այս երկուսն իրարից դժվար է տարանջատել, քանզի հաղթանակներն առանց կորուստների երբեք չեն տրվում:

Հայ ժողովրդի համար մայիսը ցավալի կորուստներով սրբագործված, բայց և հաղթանակների հպարտությամբ ամրագրված ամիս է: Ավարայր-Սարգարապատ-Շուշի. այս տեղանունները ժամանակային ու աշխարհագրական մեկ ամբողջության մեջ են ընկալվում, քանզի իրար են կապում հիշարժան երեք իրադարձություններ, որոնք մեր ազգի համար հիրավի՛ բախտորոշ են եղել: Չլինել Ավարայրը, գուցե թե չկարողանայինք Սարգարապատում հաղթել, իսկ հետագայում արդեն՝ Շուշիում, վերահաստատել մեր մշտագոյության իրավունքը:

Անցյալի սխրանքները գալիք սերունդներին տոգորում են հայրենասիրությամբ: Անգամ Մեծ հայրենականում, ֆաշիզմի դեմ մղված աշխարհացունց պատերազմում, հայ մարտիկներին ոգեշնչող դարձյալ նախնիների սխրանքն է եղել, իր իսկ բազկի ուժին ապավինելու վստահությունը: Չի կարող լինել ուրիշի պատերազմ, երբ ճժարի վրա է դրված նաև թո ազգի լինել-չլինելու հարցը: Անկասկած է, որ եթե երկրորդ համաշխարհային պատերազմում խորհրդային Միությունը պարտվեր, ապա հայ ժողովուրդը կենթարկվեր նոր ցեղասպանության, այս անգամ՝ թերևս ամբողջական ցեղաջնջման ծանր հեռանկարով: Հենց այդ գիտակցումով են հայրուր հազարավոր հայ քաջորդիներ մարտնչել նացիզմի դեմ՝ աչքի ընկնելով անուրանալի քաջությանը:

Արցախում մայիսյան հաղթանակների բազմատոնը նշում են առանձնահատուկ շուքով, որովհետև այն իր մեջ մարմնավորում է մեր անցյալը, ներկան ու ապագան:

Մայիսի 9-ը նաև յուրօրինակ միասնության խորհրդանիշ է՝ Արցախ-Հայաստան-Սփյուռք անտրոհելի կապով: Ակնհայտ է, որ Ադրբեյջանին նոր արկածախնդրությունից զերծ է պահում ինչպես հայ զինվորի՝ ռազմական գործին փայլուն կերպով տիրապետելու կարողությունը, այնպես էլ մեր համախումբ վճռականությունը, և հենց այս երկուսի համակցությամբ կարողացանք հաղթել Արցախյան պատերազմում՝ հակառակորդին պարտադրելով տևական զինադադարի:

Քաջությունն ու կռվելու ունակությունը, այո՛, գեներտիկորեն են տրված մեզ, բայց ահա միաբան լինելու անհրաժեշտությունը բխում է ազգի մշտագոյության անփոփոխ հրամայականից: Եվ սա պատմությունից քաղած ճշմարիտ դասն է, որ պիտի փոխանցենք սերնդեսերունդ:

Եռատոնի բերկրանքը մեր սրտերում միշտ պատրաստ լինենք նորանոր հաղթանակների:

«ԼՍԱՐԱՐ»

## ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳԱՐՈՒՆԸ ԵՐԿՆԱՆԵՐԶ ՇՈՒՇԻՈՒՄ

Գարունն իր լիառատ իրավակատարումների մեջ է այստեղ՝ հաղթանամար Շուշիում: Արևի շողերը շքեղորեն են զարդարում հաղթական բարձունքը, ասես իրենք են կյանքի բանալին: Եվ, իրոք, արևն է ոսկեգոծում կյանքն այստեղ, որ իր շղարշները փռելով՝ ջերմություն ու տրամադրություն է բաշխում: Շիլերն են ելնում հողի ընդերքից, ծաղկունքի շիթերն են երանգվում, ու ամեն ինչ սկսվում է նորից՝ հաղորդելով բերկրանք յուրաքանչյուրին: Արևի առինքնող ջերմությունը կենարար գործություն է հաղորդում քաղաքին: Շուշին, արծվենի թևերը փռած, սաղմոս է կարդում կյանքի արշալույսին, ու գարունը շիկնում է այդ քմբուշ ու ծավալուն օրինաբանությունից:

Ծ ա ղ կ ա զ ա ղ Վ ա ծ Շուշին ապրիլյան գատկի նախօրյակին հաստատում է կյանքի հարատևումը՝ միաժամանակ ոգեկոչելով մեր մեկդարյա անթեղած ողբերգությունը: Ճկուն ոստերն են պսակվում գեղադեմ տիկնանց ու նազանի օրիորդների զլխին ու հաստատում մաքառման ու կյանքի ուժը, այնինչ յուրաքանչյուրի կրծքին երևում է անմոռուկը՝ մեր անմոռաց վշտի խտացված արտահայտությունն ու ինքնության հաստատումը, իսկ յուրաքանչյուրի հոգուն պոռթկում է ցասման ու պահանջատիրության գոչը, և քաջերի սերունդը ընդվզում է, ինչպես իր ազգը՝ ողջ մոլորակի առջև, և այդ պահանջը ալիքվում է ողջ երկրագնդով...

Մեր ուժի գաղտնիքը մեր հարատևումն է, որ տառապանքից հույս քամելով՝ զարթոնքի ավելիսն է բերում, և գարունը դառնում է լուսաշող ու ջերմաբույր, որ մայիսյան հաղթանակներով թևավորվելով՝ կարևորում է մեր տոկունությունը գոյության հողվայություն: 23-րդ գարունն է հաղթանակած Շուշիում, որ մոխիրներից վերընծյուղված՝ իր հաղթական ուղերձն է հրովարտական հպարտորեն: Ու ամեն ինչ գեղաժպիտ ու վարարում կյանքի մի տրոփն է ներկայացնում:


Մենք, որ տասնամյակներ շարունակ գրկված էինք օրհնության ակունքից՝ Աստվածային մերձավորությունից, հիմա զարկերակված կյանքի մի մասն ենք դարձել:

Ո՞վ չի ուզեմա մտնել վսեմաշուք Ղազանչեցոց եկեղեցին, որ համդիսամալով Շուշի կենտրոնական փողոցի հնայքը, ցուցակետը՝ ճերմակաթղ վեղարով իր հյուրանմեծար տնօրինությամբ բոլորին ներս է հրավիրում: Մարդիկ հեռավոր տեղերից են ուխտի գալիս, իսկ այն մեր ճամփին է: Քայլում են խանդավառ, անգամ մոռացած կյանքի անակնկալներն ու դժվարությունները, և մի

քանի քայլից հասնում եկեղեցու մուտքին: Ինչպիսի՞ վեհաշուք պատկեր, սրտի ինչպիսի՞ նորոգում՝ ունկնդիր լինելով Սուրբ պատարագի խորախորհուրդ ընթացքին և ինքդ հաղորդվելով նրա կենարար էությանը:

Նորոգ են հնամյա ու նորակերտ քաղաքի երկու եկեղեցիներն էլ, ուր մարդն իրեն զգում է աստվածամերձ ու անդորրավետ վայրում, ուր մտքիդ ծործորները լցվում են աստվածային մաքրությանը, ու հոգուդ ծալքերն են բացվում: Լռությունը սրբավայրերում շատ խոսուն է ու տարողունակ:

Հովհաննես Սկրտիչ գողտ-



րիկ եկեղեցին ունի հովվատուն, ուր յուրաքանչյուր շաբաթօրյա ժամերգությանը հաջորդում են տեր Մեսրոպ քահանայի հոգեշաի թեմատիկ, ուղղորդված գրույցները եկեղեցու Տիկնանց միության անդամների հետ: Աստված օրհնի շնորհաբուխ պատգամներով լեցուն, մարդկանց հոգիները նորոգող Մեսրոպ քահանային՝ իր ճշմարիտ ճանապարհի ընթացքն անշեղ պահելով և եկեղեցու մեծահոգի բարերարին, ով Աստվածային ծայրին ունկնդիր՝ մեծ հոգածություն է ցուցաբերում՝ հիմնովին վերանորոգելով եկեղեցին ու նրա շրջակա տարածքը՝ արգելելով անգամ իր անունը հնչեցնել:

Իսկ մեզ ինչ է մնում. անդադար օրհնաբանել երկնայինին՝ մեր երկրից ու մարդկանցից իր աստվածաշնորհ օրհնությունն անպակաս անելու համար:

Դե իսկ կրկին անդադառնալով Ղազանչեցոցին՝ արժե ասել ավելին: Այստեղից՝ չէ, որ ուղիղ հեռուստակամրջով իրար հետ են կապվել մեր հավատի երկու պատվարները՝ Շուշին ու Երուսաղեմը, և ամեն տարվա կարևոր տոներին, մասնավոր հաղթանակի տոնին, այն դառնում է մեր միասնական մտքի ուխտատեղին: Ու թող ամեն բան կարգավորվի՝ ի բարօրություն մեր երկրի: Գուցե մի օր էլ աշխարհի հով-



վապետի՝ Հռոմի Պապի հետ անմիջական կապ հաստատենք, միայն թե այս դեպքում այն լինի ոչ ցեղասպանության ողբերգական իրողության հաստատման անհրաժեշտություն, այլ որպես քրիստոնեական եկեղեցիների համերաշխության և մեր աշխարհի վերջնական հաղթանակի առհավատյա... Ինչե՛ր ասես, որ չեն լինում այս բազմաբովանդակ աշխարհում:

Մենք մեր տուն-անդաստանի հոգեներն ենք հոգում, և խաղաղության բաղձանք առաքում առ Աստված, որ Տիրոջ աջը հովանի լինի մեզ. մեր ասիանները լինեն անառիկ, զինվորները՝ հոգեպես ամուր, երկիրը՝ շեն, ու գաղթի որևէ ալիք չտարագրի հային: Ինչքան էլ Սփյուռքը լինի հզոր, այն եթե հանգրվան էլ է, Հայրենիք չէ: Մենք այստեղ պիտի լինենք ուժեղ: Ինչ է, չունե՛նք ուժեր, չունե՛նք ներուժ: Ամեն բան թող ողջախոհությամբ ստեղծվի: Արյունաներկ հողը բերրիությունից բերկրի, ու Շուշին տոնախմբույթան եկածների համար լիուլի ոստան լինի:

Այո՛, Շուշին ոստան է, առավելապես՝ հաղթանակի: Եվ հայության ուժերն ուղղված են քաղաքը շենացնելուն: Ավերներից մեջքն ուղղելով՝ այն իր դիմագիծն է կերտում: Եվ արմատական տեղաշարժեր կատարվեցին այս հաղթական ոստանում: Սա մեր Ոգո ոստանն է: Ողբալի կորուստներից հետո Շուշին մեր ակնառու հաղթանակի կարապետն է: Եղեռնված ազգի առաջին ոսկե ծիլն է Շուշին: Զգալու այն անալի բերկրանքը, որ կիսում են մեր քաղաքի ազատարարները, պետք է գալ ու ներկա լինել մայիսինյան տոնախմբությանը, որ հանընդհանուր խնդրություն է, համազգային բերկրանք: Ու՛մ հպարտ հայացքը չի հառնում Շուշիին: Եվ այն այլևս բարենորոգ մի բարձրաբերդ է, իրականացած իրձերի նպատակապետ: Եվ քաղաքը հյուրանմեծար տնօրինությամբ ընդունում է բոլորին: Այն մի փոքրիկ արևի շողը, որ բացվում է ամպերի տակից, բավական է խանդավառելու բո-

լորին: Ո՛ւմը չէ Շուշին՝ և հրամանատարինն է, և՛ զինվորինը, և՛ առավելագույնը՝ Շուշիում ապրողներինը: Եթե այդպես չմտածենք, հեշտ չէր լինի այստեղ ապրելը:

Եվ ամեն ոք, ով իրավամբ շուշեցի է, ամեն մի բարենորոգում ընդունում է ցնծությամբ: Տեսե՛ք՝ ինչպես են իրար հաջորդում տնտեսական ճգնաժամերը, բայց մարդիկ դիմակայում են: Ունենալով մի փոքրիկ աշխատանք՝ նրանք արարում են թե՛ իրենց, թե՛ քաղաքի համար: Ու ինչքան ավեր շենքեր նորոգվեցին, փողոցներ ասֆալտապատվեցին, ու քաղաքը դարձավ Քաղաք՝ իր բոլոր վարչատնտեսական կառույցներով:

Բարձրաբերձ քաղաքն ունի քմայքներ, բայց մարդիկ դիմառնում են և՛ ցրտին, և՛ հազար ու մի հոգսերին, քանզի մռայլ, անձրևոտ, ամպրոպաբեր օրերին ու հաճախակի հանդիպող ծյունամարդկաներին քաղաքը դառնում է մտախոհ, մռայլադեմ՝ փորձելով մարդկանց տոկունությունը: Այստեղ է երևում շուշեցու ուժը, դիմակայելու ու նորը կերտելու կամքը: Ու մարդիկ այստեղ ավելի են հակված ամեն մի լավով ուրախանալու, քանզի ամեն լավ բան ստեղծվում է նրանց մասնակցությամբ, նրանց աչքի առջև, նրանց համար, ու լավը յուրաքանչյուրին է պետք:

Ամեն տարվա Մայիսի 9-ի նախօրյակին քաղաքը տոնակառնում է զարդարվում, ու սա քաղաքին շատ է սազում: Առավելապես համազարկերի պես են հնչում թմբուկների ձայներն ու զինվորական վաշտերի խորխտ քայլերգերը, որոնց համաչափությունը կյանքի ռիթմ է ստեղծում: Ու սկսվում է հաղթանակի տոնը Շուշիում...

Շուշիի՛ վերից վար կամ վարից վեր մայրուղուց քաղաք բարձրացող ճանապարհով իրար է հաջորդում աշխուժացող հոսքը՝ հետիոտն, մարդկային, տեխնիկայի: Քաղաքի տրոփյունն արագանում է: Բոլորը եռուզեռի մեջ են հայտնվում: Եթե օրն արևոտ է լինում, ցուցադրվում են բազմաբնույթ ցուցահանդեսներ, ազգագրական մշակույթի մուշներ, ու ամեն-ամեն ինչ, բոլորը՝ հայկական:

ԸՆԹԱՅԸ

«ՕԼԻՄՊԻԱԴԱՅՈՒՄ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ Է ԱՐԴՅՈՒՆՔ ՅՈՒՅՅ ՏԱԼ ԱՅՆ ԱՇԱԿԵՐՏԸ, ՈՐՆ ՈՒՆԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՔ ԶԱՐԳԱՆՈՂ ՈՒՍՈՒՅԻՉՆԵՐ»

ԼՂԳ կրթության և գիտության նախարարությունն ամփոփել է դպրոցականների 2014-2015 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադայի արդյունքները: Մրցանակների համեմատն արարողությունը տեղի ունեցավ Ստեփանակերտի հ. 1 հիմնական դպրոցի դահլիճում:

Մրցանակակիր աշակերտներին և նրանց ուսուցիչներին շնորհավորել է ԼՂԳ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը:

Նրանք իսկապես ունեն տվյալ առարկայից խոր գիտելիքներ: Նրանք, ովքեր արդեն ավարտում են 12-րդ դասարանը և արդեն երկրորդ կամ երրորդ անգամ են մասնակցում օլիմպիադաներին և լավագույն արդյունք են ցույց տվել, անշուշտ, կփայլեն նաև միասնական քննություններում: Տարիները փորձը դա է ցույց տալիս, որ ի դեմս այդ աշակերտների՝ յուրաքանչյուր տարի ունենում ենք ընդգծված շրջանավարտներ, որոնք միասնական

ղություններ և դրանք զարգացնող ուսուցիչներ: Եթե ուսուցիչը ձեզ հետ լրացուցիչ չափատի, առարկայական օլիմպիադաներում միայն ծրագրային գիտելիքներով հնարավոր չէ մրցանակային տեղ գրավել:

Ուրախսալի է, որ օլիմպիադայի մասնակիցների մեջ քիչ չեն 6-9-րդ դասարանների աշակերտները, որոնք իրենց գիտելիքները փայլուն դրսևորել են նաև 7-րդում: Այս երեխաների հետ պետք է աշխատել, որպեսզի նվաճած դիրքերը չզիջեն և ավելի բարձր արդյունքների հասնեն՝ հորդորեց նախարարը: Թվերը նույնպես խոսում են այդ մասին: Երեք տարի շարունակ նույն աշակերտների անունները կրկնվում են, ինչը գովելի է, նշանակում է՝ այդ դպրոցներում համապատասխան աշխատանք է տարվում: Բայց ոչ բոլոր դպրոցներում: Ս. Ասրյանը մատնանշեց մի շարք ավագ ու հոսքային ուսուցանման միջնակարգ դպրոցներ, որոնք հավասար պայմաններում լինելով՝ չեն ապահովում անհրաժեշտ արդյունքներ: Նա կրթության շրջանային բաժնիների վարիչներին, որոնք ներկա էին միջոցառմանը, ուղղորդեց, որ յուրաքանչյուր շրջանում

աշխատել և հասնել արդյունքների՝ այս կարծիքին է նախարարը:

Այսօր իրենց կարողությունները զարգացնելու և ուժեղը չափելու հնարավորություն ստեղծված են բոլոր տարիքի երեխաների համար: Եթե առարկայական օլիմպիադաները սկսում են 8-9-րդ դասարաններից, ապա միջին օղակի համար նախարարությունը միջազգային մի շարք խաղ-մրցույթներ է անցկացնում՝ «Կենզուրու», «Ռուսական արջուկ», «Մեղու», ինչպես նաև ինտելեկտուալ խաղեր («Չայ ասպետ», «Պատանի ասպետ» «Ամենախելացին» և այլն), որոնց նույնպես արցախցի դպրոցականները մասնակցում են: Ասել է թե՛ բազմակողմանի զարգացման համար բոլոր պայմանները ստեղծված են: «Այս հնարավորությունները, որ ձեզ ընձեռված են, ձեր ուսումնառության տարիներին աշխատեք արդյունավետ օգտագործել, խորացրեք, գրականությունը հիմա այնքան է շատ, որ որոշ հարցերում դուք կարող եք գերազանցել ձեր ուսուցիչներին, եթե զուգահեռաբար ուսուցիչը իր զարգացումը չունենա», - խորհուրդ տվեց նախարարը: Նպատակը մեկն է՝ որպեսզի արցախցի կարողանա համաքայլ ընթանալ համաշխարհային առաջադիմության հետ: Ս. Ասրյանը ցավով արձանագրեց, որ դեռևս չեն կարողանում տեղեկատվական տեխնոլոգիաների՝ ինֆորմատիկա առարկայի գծով որոշակի արդյունքների հասնել, չնայած այս ուղղությամբ ցուցաբերված նախաձեռնություններին: Պարզապես խնդիր ունեն մասնագետների առկայությունը, որոնք պետք է աշխատեն երեխաների հետ: «Երեխաների ընդունակությունները բոլոր տեղերում նույնն են, նայած թե որտեղ որ ուսուցիչ ինչպես է աշխատում իր աշակերտի հետ, ըստ այդմ էլ՝ արդյունքներն են», - դարձյալ ուսուցիչ դերը կարևորեց կրթության և գիտության նախարարը՝ որպես օրինակ բերելով գյուղական մի շարք դպրոցների, որտեղ լավ մասնագետների շնորհիվ բարձր արդյունքներ են ապահովվում:



քննություններում ցուցաբերում են բարձր արդյունքներ: Նախարարը դա գնահատեց որպես ուսուցիչների՝ նրանց հետ կատարած աշխատանքի արդյունք: Եվ նաև ունենք ընդգծված ուսուցիչներ, որոնք յուրաքանչյուր տարի օլիմպիադայում լավագույն աշակերտներ են տալիս: «Մենք պարտավորված ենք գնահատելու ինչպես ձեր, այնպես էլ ուսուցիչների կատարած աշխատանքը: Եվ սա պետք է մեզ ավելի նպատակաուղղի», -ասել է նախարարը՝ այս համատեքստում նշելով, որ դեռևս անելիքներ շատ կան. համեմատության մեջ դնելով՝ կարելի է տեսնել, որ օլիմպիադաներում տեղեր գրաված դպրոցները համարյա կրկնվում են: «Դա օրինաչափություն է, որովհետև օլիմպիադայում կարողանում է արդյունք ցույց տալ այն դպրոցի աշակերտը, որն ունի համապատասխան կարո-

վելուծվեն օլիմպիադայի արդյունքները, և հետևություններ արվեն: Յուրաքանչյուր դպրոց պետք է մտահոգված լինի այն թվերով, որ բերված են նախարարության վերլուծության մեջ: Միևնույն ժամանակ, պետք է հաշվի առնել, որ օլիմպիադայում տեղ գրավելը ոչ թե մասնակիցների շատ քանակի մեջ է, այլ՝ որակի, որ լինեն ընդգծված ընդունակություններով երեխաներ, որոնց կարողությունները տվյալ դպրոցի ուսուցիչը կարողանա զարգացնել: Իսկ օլիմպիադայում լավ արդյունքներ ունենալու համար, ի դեպ, շատ մեծ միջոցներ և ջանքեր պետք չեն, քանզի հիմնականում բոլոր ընտանիքները և դպրոցները համակարգիչ և համացանց ունեն, որտեղ ինչքան ասես՝ գրականություն կա, որից աշակերտները և ուսուցիչները կարող են օգտվել, միայն թե պետք է նպատակադրվել,

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՎԱՊԹԱՆԱԿԻ ԳԱՐՈՒՆԸ ԵՐԿՆԱՄԵՐԶ ԶՈՒՇԻՈՒՄ

1 Իսկ եթե օրն անձրևոտ է լինում, մարդիկ, անձրևանոցներով պատսպարվելով, դիմում են դեպի Վազգեն Սարգսյանի հրապարակ, որտեղ բոլորն անհամբեր սպասում են Ստեփանակերտից եկող Զաղաբանակի շքերթի առաջնորդներին ու մասնակիցներին՝ սկսած մեր համարապետությունների նախագահներից, բարձրաստիճան գինվորականներից մինչև մեծ հաղթանակը լիաբուխ շողների, որ հանդիսավորապես ժամանելով և ներկա գտնվելով՝ պատվում են Զայոց բերդաքաղաքի խրախճանքը: Ծաղկեպսակներ են տեղադրվում, գինվորական երգման արարողություն է կատարվում, թնդում է հայոց երգը, իրար են ողջագուրվում նախկին գինվորականներ ու ծանոթներ, ու տրամադրության կիզակետը արտահայտվում է ցնծության աղաղակներով:

ին: Ամենակարևորն այն է, որ նախ մտնում են ու լցվում Ղազանչեցոց եկեղեցի, որը հաղթանակի բերկրանքը վայելողների հանդիպավայրն է, մեծ ուխտատեղի, որ բյուր արդաբար շարականներով օծում է հայկազուններին, ամենին ու ամենքին...

Այսպիսի ոստանում ապրելը և պատվաբեր է, և պարտավորեցնող: Եվ մենք քաղում ենք հաղթանակի բարիքները, որոնցով ամբողջանում է ինքը Քաղաքը: Քաղաքն ունի իր սիրտը՝ հաչչներուկը, որ իրար է կապում բոլոր կետերն ու հանգույցները: Բարձրահայաց դիրքով իր տեսադաշտում են և՛ հոգևոր խորանները, և՛ մշակութային օջախները, և՛ Արվեստի կենտրոնն ու նորակառույց մարզադաշտը, և՛ հիմնանորոգ դպրոցն ու վերնի պուրակը: Սա Շուշիի ամենաբանուկ թաղամասն է, ուր կենտրոնացած է բնակչության հիմնական մասը: Բայց Շուշիի մուտքը ներքնամասում բացվում է կենտրոնական՝ Վազգեն Սարգսյանի հրապարակով, որտեղ գլխավոր շենքն է, ուր տեղակայված է վարչական կառույցը, կողքին՝ հրաշակերտը՝ կերպարվեստի թանգարանը, քիչ վերևում՝ բարձրահարկ հյուրանոցը, որ մի յուրահատուկ հանգրվան է թե՛ տուրիստների և թե՛ մշակութային իրադարձությունների համար՝ իր հարմարավետ զբոսայգով: Վարչակազմի ճանապարհը բացում է քաղաքի մյուս հատվածը՝ դարձյալ մշակութային օջախներով՝ նորոգ գրադարան, Նարեկացի արվեստի միություն: Այս ճանապարհը կդառնա բանական ուսան-

ղության համար: Այստեղ այս տարվա սեպտեմբերին իրենց դռները կբացեն հարմարավետ ագրարային համալսարանի ու նորագույն տեխնոլոգիաներով հագեցած արհեստագործական ուսումնարանի դռները, ու Շուշին նոր շնչառությամբ կլցվի: Քաղաքի կերտումը թափ կառնի երիտասարդական լիցքով, ու Շուշին մի քանի քայլերով, ևս նորոգ կենտրոններով կհասնի իր ամբողջացմանը, որոնցից ամեն մեկն իր ուրույն դերն ունի:

Շարժատուն այստեղ, ինչքան հարսանյաց հանդիսություններ օրինվում, ամուսնների օրհնության քանի՞ կարգեր կատարվում: Եվ ինչքան կյանքն առաջ է գնում, Շուշին ավելի է կերպավորվում: Ու այն ամենը, ինչով շնչում է քաղաքը, ողջ հայության հաղթանակի ձեռքբերումն է: Եվ բոլորով մեկտեղ ենք հաղթանակ կռել: Ու շարունակում ենք...

Եղեռնի 100-ամյա արիավիրքներից հետո բերկրալի տոնակատարություն բարձրաբերձ ոստանում, որ ասել է՝ հիմնավորը քաղաքակրթություն ունեցող մի ժողովրդի կյանքի վերընծյուղում, ու հայոց Շուշին վերստին դառնում է մեր մեծ մշակութային ոստանը, ինչպես՝ նախկինում: Արդեն ավանդական է դառնում մշակութային միջոցառումների տոնակատարությունը մի տարի առաջ բացված և Շուշիի հերոս հրամանատար Վաչագան Իշխանյանի պատվին անվանակոչված մարզամշակութային համալիրում, ու սկսվում է այնպիսի տոնախմբություն, որից թնդում է Շուշ-

ի մուտքը ներքնամասում բացվում է կենտրոնական՝ Վազգեն Սարգսյանի հրապարակով, որտեղ գլխավոր շենքն է, ուր տեղակայված է վարչական կառույցը, կողքին՝ հրաշակերտը՝ կերպարվեստի թանգարանը, քիչ վերևում՝ բարձրահարկ հյուրանոցը, որ մի յուրահատուկ հանգրվան է թե՛ տուրիստների և թե՛ մշակութային իրադարձությունների համար՝ իր հարմարավետ զբոսայգով: Վարչակազմի ճանապարհը բացում է քաղաքի մյուս հատվածը՝ դարձյալ մշակութային օջախներով՝ նորոգ գրադարան, Նարեկացի արվեստի միություն: Այս ճանապարհը կդառնա բանական ուսան-

ղության համար: Այստեղ այս տարվա սեպտեմբերին իրենց դռները կբացեն հարմարավետ ագրարային համալսարանի ու նորագույն տեխնոլոգիաներով հագեցած արհեստագործական ուսումնարանի դռները, ու Շուշին նոր շնչառությամբ կլցվի: Քաղաքի կերտումը թափ կառնի երիտասարդական լիցքով, ու Շուշին մի քանի քայլերով, ևս նորոգ կենտրոններով կհասնի իր ամբողջացմանը, որոնցից ամեն մեկն իր ուրույն դերն ունի:

Ու կյանքը վաղուց իր բնակամուն հունի մեջ է երկնամերձ Շուշիում, որ առաջինն է լսում աստվածային շշուռները և Տերունական տնօրինության ներքո իր գործերը կարգավորում: Այն խաչապսակ տաճարների, բազմաթիվ թանգարանների, մշակութային խաչներուկների ու շրջադարձային Զաղթանակի քաղաք է: Սա հանդիպավայրերի, ուխտագնացությունների սրբազան վայր է, ուր երկնառաք աղոթքները շուտ են հասնում Արարչին: Քանի՞-քանի մոմեր են

Շարժատուն այստեղ, ինչքան հարսանյաց հանդիսություններ օրինվում, ամուսնների օրհնության քանի՞ կարգեր կատարվում: Եվ ինչքան կյանքն առաջ է գնում, Շուշին ավելի է կերպավորվում: Ու այն ամենը, ինչով շնչում է քաղաքը, ողջ հայության հաղթանակի ձեռքբերումն է: Եվ բոլորով մեկտեղ ենք հաղթանակ կռել: Ու շարունակում ենք...

Վարդիթեր ՅԱԿՈՒՅԱՆ

ՕԼԻՄՊԻԱԴԱ-2015

ՎԵՐԼՈՒԹՅՈՒՆ

ԼՂՉ ԳՊՐՈՅՆԱԿԱՆՆԵՐԻ 2014-2015-ՈՒՍՏԱՐՎԱ ԱՈՒՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈԽԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

Բարդ է ներկայիս կրթական դաշտը: Շարունակ փոփոխվող կյանքի տարբեր բնագավառներից կրթությունն առաջինն է ցնցումների ենթարկվում, բայց և առաջինը նա պետք է արձագանքի տեղի ունեցող փոփոխություններին: Կրթության համակարգում իրականացվող բոլոր բարեփոխումները մեկ նպատակ են հետապնդում՝ կրթել ու դաստիարակել այնպիսի սերունդ, որն իր գիտելիքներով ու կարողություններով գերազանցի նախորդ սերունդին:

Յուրաքանչյուր երկրի կրթական խնդիրները բխում են տվյալ երկրի քաղաքացիների, հասարակության, ազգի և պետության շահերից: Կիրթ մարդը, լավ մասնագետը, դժվարություններին դիմակայելու ընդունակ քաղաքացին պետության համար հարստություն է, ինչու չէ՞ նաև՝ հպարտություն:

Այն, թե ուսումնառության ընթացքում ինչպիսի լավագույն արժեքներ են ձևավորվում դպրոցականների մոտ, լավագույնս դրսևորվում է ներդրողական, արտադրողական, միջոցառողական, շրջանային կամ հանրապետական տարբեր միջոցառումներում ու մրցույթներում:

Ուսուցման նպատակն է խթանել աշակերտի մտածողությունը, կատարելագործել նրա ինքնուրույնությունը, հնարավորություն տալ պատկերավոր մտածել, և որ ամենակարևորն է՝ այդ ամենը գրագետ ի յուրյց դնել: Նման միտում ունեն մեծ դպրոցականների առարկայական օլիմպիադաները:

Առանց վարանման կարող ենք ասել, որ օլիմպիադայի նպատակն է տաղանդավոր, շնորհալի և ստեղծագործական կարողություններ ունեցող երեխաների հայտնաբերումը, ուսումնական առարկաների նկատմամբ նրանց հետաքրքրությունների զարգացումը, այդ առարկաներից խոր ու կայուն գիտելիքներ ստանալուն նպաստելը:

Դեկլարվելով «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի պահանջներով ու հիմք ընդունելով «Դպրոցականների առարկայական օլիմպիադաների անցկացման կարգի» պահանջները, ինչպես նաև ԼՂՀ կրթության և գիտության նախարարի 2014թ. դեկտեմբերի 20-ի N 275/Ս հրամանը՝ փետրվարի 21-ից մարտի 9-ն ընկած ժամանակահատվածում Ստեփանակերտի հ. 8 հիմնական դպրոցում 14 առարկաներից (հայոց լեզու, հայ գրականություն, ռուսաց լեզու, անգլերեն լեզու, ֆրանսերեն լեզու, պատմություն, աշխարհագրություն, քիմիա, կենսաբանություն, մաթեմատիկա, ֆիզիկա, ինֆորմատիկա, հայոց եկեղեցու պատմություն, նախնական զինվորական պատրաստություն) անց է կացվել ԼՂՀ դպրոցականների 2014-2015 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլը՝ Հայաստանի Հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադայի մարզային փուլի ժամանակացույցի համապատասխան՝ յուրաքանչյուր առարկայի հատկացնելով առանձին օր: Շրջվարչակազմերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմերի կրթության բաժինները, օլիմպիադայի շրջանային (քաղաքային) փուլի արդյունքների ամփոփման հիման վրա, հանրապետական փուլին մասնակցելու իրավունք են տվել 373 դպրոցականների (անցած ուսումնական տարվա 349-ի փոխարեն), որից բացակայել է 12 աշակերտ: Ինչպես տեսնում ենք, մասնակիցների ընդհանուր քանակը նախորդ տարվա համեմատ աճել է:

Ներկայացնենք մասնակիցների քանակն ըստ շրջանների՝ 5 տարվա կտրվածքով

Table with 6 columns: Year (2010-2011 to 2014-2015) and 13 subjects. Total participants: 263, 315, 337, 349, 373.

Մասնակիցների քանակն ըստ առարկաների՝ 5 տարվա կտրվածքով

Table with 6 columns: Subject and 5 years (2010-2011 to 2014-2015). Total participants: 263, 315, 337, 349, 373.

Անցած տարվա համեմատ մասնակիցների քանակն աճել է անգլերեն, պատմություն, մաթեմատիկա, հայոց եկեղեցու պատմություն և նախնական զինվորական պատրաստություն առարկաներից:

Ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս օլիմպիադայի մասնակիցների գրավոր աշխատանքները ստուգելու նպատակով կրթության և գիտության նախարարի հրամանով ստեղծվել են առարկայական ստուգող հանձնաժողովներ՝ ԱրՊՀ համապատասխան ամբիոնների վարիչների ղեկավարությամբ և Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական դպրոցների ուսուցիչների մասնակցությամբ:

Գրավոր աշխատանքների ստուգումները բոլոր առարկաներից սկսվել են նույն օրը, ամիրաժեշտության դեպքում շարունակվել նաև հաջորդ օրը: Արդյունքները հանրապետական հանձնաժողովի կողմից ամփոփվել ու ներկայացվել են նախարարին և նույն օրը տեղադրվել նախարարության www.edu.nkr.am կայքում: Օլիմպիադայի 17 մասնակիցներ բողոքարկման օրերին հանրապետական հանձնաժողովին են դիմել հայոց լեզու, մաթեմատիկա, ֆիզիկա, կենսաբանություն, ռուսաց լեզու և ՆԶՊ առարկաներից: Բողոքարկման արդյունքների մասին և տեղեկատվություն է տեղադրվել նախարարության վեբոմնիքայ կայքում:

Օլիմպիադայի արդյունքների ամփոփումից հետո մրցանակային տեղերն ըստ առարկաների հետևյալն են.

Table with 3 columns: Subject, 2nd place, 1st place.

Ներկայացնենք վերջին հինգ տարվա մրցանակային տեղերի քանակն ըստ առարկաների

Table with 6 columns: Year (2010-2011 to 2014-2015) and 13 subjects. Total participants: 40, 49, 51, 52, 64.

Հայոց լեզու, անգլերեն, պատմություն, մաթեմատիկա առարկաներից նախորդ տարվա համեմատ մրցանակային տեղերի քանակը նվազել է, իսկ ռուսաց լեզու, հայ գրականություն, հայոց եկեղեցու պատմություն, կենսաբանություն, ֆիզիկա և ՆԶՊ առարկաներից մրցանակային տեղերն ավելացել են: Եթե համեմատելու լինենք դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի վերջին 5 տարվա արդյունքները, ապա պատկերը կլինի այսպիսին.

Table with 5 columns: Year (2010-2011 to 2014-2015) and 5 subjects. Total participants: 40, 49, 51, 52, 64.

1-ին և 3-րդ մրցանակային տեղերն ըստ ուսումնական տարիների աճել է: Այս տարի ևս մրցանակային տեղ չունեցանք քիմիա և ինֆորմատիկա առարկաներից, ի դեպ, նշենք, որ քիմիա առարկայից մրցանակային տեղ չենք ունեցել 2010-2011, 2012-2013, 2013-2014 ուսումնական տարիներին ևս: Այս ուսումնականում մրցանակային տեղերի մեծ մասը բաժին հասավ հայոց լեզու (9 մրցանակային տեղ), անգլերեն (8 տեղ/), ՅԵՊ (7 տեղ) և ՆԶՊ (14 տեղ) առարկաներին:

Նախորդ ուսումնական տարվա համեմատ մրցանակային տեղերն աճել են Ստեփանակերտի, Ասկերանի, Մարտունու և Հարդուբի շրջանների թիմերի մոտ:

Ըստ շրջանների մրցանակային տեղերի քանակը

Table with 6 columns: Region and 5 years (2010-2011 to 2014-2015). Total participants: 7, 11, 34, 83, 64/83.

Այսպիսով՝ մրցանակային տեղերի քանակի առումով 1-ին տեղում է Ստեփանակերտի թիմը (33 տեղ՝ 25,8%), 2-րդ տեղում՝ Մարտունու թիմը (12 տեղ՝ 23%), 3-րդ տեղում՝ Հարդուբի թիմը (5 տեղ՝ 15,6%):

Կանգ առնենք մեկ այլ հարցի վրա, որը, կարծում ենք, բոլորին կհուզի: Ինչո՞վ բացատրել, որ աշխարհագրություն առարկայի 26 մասնակիցներից միայն երկուսին հաջողվեց գրավել 3-րդ տեղ, կենսաբանություն առարկայի 20 մասնակիցներից 2 հոգու հաջողվեց գրավել 3-րդ տեղ, իսկ հայ գրականություն առարկայի 29 մասնակիցներից ընդամենը 4 հոգի գրավեցին մրցանակային տեղ:

ՕԼԻՄՊԻԱԴԱ-2015

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԼՂԶ ԳՊՐՈՅՎԱԿՆԵՐԻ 2014-2015-ՈՒՍԱՐՎԱ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈԽԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

Յ Ավելացնենք նաև, որ այս տարի դրական 8 միավորային շեմը չհաղթահարած մասնակիցների քանակն ըստ առարկաների դարձյալ անհանգստացնող է.

- հ.լեզու առարկայի 65 մասնակիցներից -3 աշակերտ
- հայ գրականություն առարկայի 30 մասնակիցներից - 5 աշակերտ
- ռուսաց լեզու առարկայի 39 մասնակիցներից - բոլորը դրական են
- օտար լեզվի առարկայի 53 մասնակիցներից - 2 աշակերտ
- մաթեմատիկա առարկայի 17 մասնակիցներից - 7 աշակերտ
- ֆիզիկա առարկայի 10 մասնակիցներից - 5 աշակերտ
- կենսաբանություն առարկայի 20 մասնակիցներից - 8 աշակերտ
- պատմություն առարկայի 43 մասնակիցներից - 13 աշակերտ
- աշխարհագրություն առարկայի 18 մասնակիցներից - 2 աշակերտ
- ինֆորմատիկա առարկայի 2 մասնակիցներից - 2 աշակերտ
- քիմիա առարկայի 15 մասնակիցներից - 8 աշակերտ
- հայոց եկեղեցու պատմություն առարկայի 23 մասնակիցներից - 2 աշակերտ
- ՆԶՊ առարկայի 38 մասնակիցներից - 1 աշակերտ

Միայն ռուսաց լեզու առարկայից է, որ լրիվ դրական միավորներ են գրանցվել: Այսինքն՝ դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի 361 մասնակիցներից 57-ի գրավոր աշխատանքները (15.8%-ը) առարկայական ստուգող հանձնաժողովների կողմից գնահատվել են «անբավարար»(8 միավորից ցածր), անցած տարվա 75-ի կամ 22%-ի փոխարեն: Չնայած 8-ից ցածր միավոր վաստակած մասնակիցների քանակը նվազել է, բայց համեմատելով ներդրողական և շրջանային փուլերի արդյունքները՝ նկատվում է, որ մասնակիցների մի ստվար մասի հավաքած միավորները օլիմպիադայի հանրապետական փուլում ահագին նվազել են: Օրինակ՝ Շուշիի Մուրաջանի անվան ավագ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Յարոսլավ Յարապետյանը օլիմպիադայի ներդրողական և շրջանային (քաղաքային) փուլերում հայոց լեզու առարկայից վաստակել էր համապատասխանաբար՝ 14 և 12.65 միավոր, իսկ հանրապետական փուլում՝ ընդամենը 6.75 միավոր, մինչդեռ նույն առարկայից Ասկերանի շրջանի Ակնաղբյուրի միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանի աշակերտուհի Աննա Մանուչարյանը օլիմպիադայի ներդրողական և շրջանային (քաղաքային) փուլերում ունենալով համապատասխանաբար 16



և 14.5 միավոր, օլիմպիադայի հանրապետական փուլում գրավել է մրցանակային 3-րդ տեղ՝ վաստակելով 15.5 միավոր, իսկ Ստեփանակերտի հ. 1 հիմնական դպրոցի 8-րդ դասարանի աշակերտուհի Աննա Յարոսլավյանը օլիմպիադայի հանրապետական փուլում վաստակելով 16.75 միավոր՝ գրավել է մրցանակային 1-ին տեղ, որը, ի դեպ, հայոց լեզու առարկայից ամենաբարձր ցուցանիշն է:

Սեկ այլ օրինակ. հայ գրականություն առարկայից Մարտունու շրջանի Գիշու միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Ալիսա Դադայանը, Քարվաճառի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Լիանա Չալաբյանը, Մարտունու շրջանի Սոսի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Աննա Դարիբյանը, Յարոսլավի շրջանի Ազոխի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Մարիամ Մելքունյանը՝ ներդրողական և շրջանային (քաղաքային) փուլերում ունենալով համապատասխանաբար 15-16,5 և 11,5-15,5 միավոր, հանրապետական փուլում վաստակել են ընդամենը 6,5-7 միավոր, մինչդեռ Ասկերանի շրջանի Ազնեքի միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանի աշակերտ Կարեն Մարտիրոսյանը, նույն առարկայից օլիմպիադայի նախորդ փուլերում ունենալով 15 և 14.75 միավորներ, հանրապետական փուլում արժանացավ մրցանակային 3-րդ տեղի՝ վաստակած 15 միավորի համար:

Անհանգստացնող փաստ է այն, որ պատմություն առարկայի 43 մասնակիցներից 13-ի գրավոր աշխատանքը գնահատվել է անբավարար: Դրանք են՝ Յարոսլավի շրջանի Թաղասեռի միջնակարգ դպրոցից՝ 1 մասնակից և Ազոխի միջնակարգ դպրոցից՝ 1 մասնակից, Տողի միջնակարգ դպրոցից՝ 1 մասնակից, Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցից՝ 1 մասնակից, Մարտակերտի հ. 1 միջնակարգ դպրոցից՝ 2 մասնակից, Մարտունու շրջանի ճարտարի հ.1 միջնակարգ դպրոցից՝ 1 մասնակից, Խնուշինակի միջնակարգ դպրոցից՝ 1 մասնակից, Ասկերանի շրջանի Նորազյուղի միջնակարգ դպրոցից՝ 1 մասնակից, Շահումյանի շրջանի Չարեքտարի, Նոր Դարաչինարի և Նոր Խարխափուտի միջնակարգ դպրոցներից 1-ական մասնակից վաստակել են ընդամենը 4-7 միավոր:

Օլիմպիադայի հանրապետական փուլի արդյունքների վերլուծության ընթացքում հաճելիորեն նկատում ենք, որ մասնակիցներից 34-ը 6-8-րդ դասարանցիներ էին, որոնցից 8 հոգի գրավել են մրցանակային տեղեր, իսկ 11-ը՝ արժանացել գովասանագրերի:

Այսպես. հայոց լեզու առարկայից ունեցանք 6-րդ դասարանցի 1 աշակերտ՝ Շանթ Գևորգյանը՝ Մարտունու շրջանի Բերդաշենի միջնակարգ դպրոցից, 7-րդ դասարանցի Աննա Մանուչարյանը՝ Ասկերանի շրջանի Ակնաղբյուրի միջնակարգ դպրոցի աշակերտ է: Ստեփանակերտի հ.8 ավագ, հ.1 հիմնական, Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնական, Շուշիի Գ. Դազարյանի ան-

վան մասնագիտացված երաժշտական, Մարտունու հ.1 միջնակարգ դպրոցների 1-ական աշակերտներ 8-րդ դասարանցիներ էին:

Հայ գրականություն առարկայից 1-ական աշակերտ Շուշիի Գ. Դազարյանի անվան դպրոցի և Ասկերանի շրջանի Ազնեքի միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանցիներ էին:

Անգլերենից Ստեփանակերտի հ. 10 հիմնական և Մարտունու շրջանի ճարտարի հ.2 հիմնական դպրոցների 3 աշակերտներ 8-րդ դասարանցիներ էին:

Ռուսաց լեզու առարկայից 4 մասնակից՝ Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ (3 աշակերտ) և 1 աշակերտ ֆիզմաթ դպրոցից, դարձյալ 8-րդցիներ էին:

Մաթեմատիկա, քիմիա և աշխարհագրություն առարկաներից մեկական աշակերտներ նույնպես 8-րդ դասարանցիներ էին (Մարտակերտի հ. 1 միջնակարգ դպրոց, Վաղուհասի միջնակարգ դպրոց, Ասկերանի շրջանի Ազնեքի միջնակարգ դպրոց):

Պատմություն առարկայից Ստեփանակերտի հ. 10 հիմնական և Մարտունու շրջանի ճարտարի հ. 5 միջնակարգ դպրոցներից 2 աշակերտներ դարձյալ 8-րդցիներ էին:

Հայոց եկեղեցու պատմություն առարկայի մեկ մասնակից՝ Արիանա Սարգսյանը, Մարտունու շրջանի ճարտարի հ.1 հոսքային դպրոցի 7-րդ դասարանի աշակերտուհի է, իսկ Ասկերանի շրջանի Խաչենի և Իվանյանի միջնակարգ դպրոցների 8-րդ դասարանցիներ Յուրա Մարգարյանն ու Լիլիթ Բեգլարյանը՝ 8-րդցիներ: Դա դեռ բավական չէ՝ երեքն էլ վաստակելով 18 և 18.5 միավորներ՝ արժանացան մրցանակային 1-ին տեղի:

Նախնական զինվորական պատրաստություն առարկայի 5 մասնակիցներ՝ Ալիսա Յարոսլավյանն ու Քրիստինե Դավթյանը Ստեփանակերտի հ. 5 հիմնական դպրոցի, Արա Գրիգորյանը՝ Ստեփանակերտի հ. 1 հիմնական դպրոցի, Սաթենիկ Միքայելյանը՝ Ստեփանակերտի հ. 7 հիմնական դպրոցի և Գագիկ Դանիելյանը՝ Մարտունու շրջանի Թաղավարդի միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանի աշակերտներ են:

Այստեղ ուզում ենք առանձնացնել առաջին անգամ ֆրանսերեն առարկայից Ստեփանակերտի հ. 1 և հ.2 հիմնական դպրոցների 5 աշակերտների մասնակցության փաստը, որոնցից 3-ը արժանացել են գովասանագրերի: Հաջողություններ ենք մաղթում նրանց և հավատացած ենք, որ այդ աշակերտներին հաջող տարիների օլիմպիադաներում մենք դեռ կհանդիպենք:

Այժմ կանգ առնենք նաև հանրապետության տարածքում գործող 3 ավագ, 5 միջնակարգ (հոսքային) և Ստեփանակերտի հ.3 միջնակարգ ու ֆիզմաթ դպրոցների աշակերտների ինչպես մասնակցության, այնպես էլ ակտիվության հարցի վրա:



Քանակական տեսանկյունից պատկերը հետևյալն է.

Դպրոց	Կլան	Խումբ	Մասնակցություն	Օտար լեզու	Այլընտրանք	Մրցանակային տեղեր	Ֆիզմաթ	Ֆիզիկա	Մաթ	Ռուս	Ստեփ	Մարտ	Գր	Ընդամենը
1 Ստեփ. հ.8 ավագ դպ.	4	1	2	4	5	-	1	-	-	-	-	-	-	17
2 Ստեփ. հ.11 ավագ դպ.	11	4	1	9	2	-	5	6	-	1	1	5	4	49
3 Շուշիի Մուրաջանի անվան ավագ	4	-	1	1	-	-	-	-	-	-	-	-	-	6
4 Ասկերանի մի	1	-	-	3	1	-	2	-	-	-	-	-	-	7
5 Մարտակերտի հ. 1 մի	1	2	-	2	2	2	1	1	1	1	-	-	-	13
6 Մարտունու հ.1 մի	2	-	2	1	-	1	1	1	-	-	-	-	1	9
7 Ճարտարի հ. 1 մի	-	-	1	1	5	1	2	1	-	1	-	2	-	14
8 Հաղորթի մի	3	-	4	4	1	-	-	-	-	1	-	-	-	13
9 Ստեփ. հ. 3 մի	-	-	9	1	-	-	-	-	-	-	-	-	-	10
10 Ֆիզմաթ	1	-	3	5	-	8	-	-	6	1	1	-	1	26

Իսկ որակական առումով վերոնշյալ դպրոցներում պատկերն այսպես է.

հայոց լեզու առարկայի 9 մրցանակային տեղերից միայն 2-ը բաժին հասավ Ստեփանակերտի հ.11 ավագ դպրոցի մասնակիցներին: Հայ գրականություն առարկայի 5 մրցանակային տեղերից 1-ական բաժին հասան Ստեփանակերտի հ.11 ավագ և Մարտակերտի հ. 1 միջնակարգ դպրոցների սաներին: Ռուսաց լեզու առարկայի 6 մրցանակային տեղերից 4-ը զբաղեցրին Ստեփանակերտի հ.3 միջնակարգ, 1-ը Ստեփանակերտի հ.11 ավագ և 1-ը Մարտունու հ.1 միջնակարգ դպրոցների աշակերտները: Օտար լեզու առարկայի 8 մրցանակային տեղերից 4-ը բաժին հասավ Ստեփանակերտի հ.11, 1-ը՝ հ.8 ավագ դպրոցներին, 2-ը՝ Յարոսլավի միջնակարգ դպրոցների աշակերտներին: Պատմություն առարկայի 4 մրցանակային տեղերից 1-ական զբաղեցրին Ստեփանակերտի հ.8 և հ. 11 ավագ, 2-ը՝ ճարտարի հ.1 միջնակարգ դպրոցների ներկայացուցիչները: Մաթեմատիկա և Ֆիզիկա առարկաների մրցանակային 6 տեղերն էլ զբաղեցրին ֆիզմաթ դպրոցի սաները: Կենսաբանություն առարկայի մրցանակային 3 տեղերը բաժին հասան Մարտունու հ. 1, Մարտակերտի հ. 1 միջնակարգ (հոսքային) և Ստեփանակերտի հ.11 ավագ դպրոցների սաներին, հայոց եկեղեցու պատմություն առարկայի 7 մրցանակային տեղերից 1-ը բաժին հասավ Ստեփանակերտի հ. 11 ավագ և 1-ը՝ ճարտարի հ.1 միջնակարգ դպրոցների սաներին, իսկ նախնական զինվորական պատրաստություն առարկաների 14 մրցանակային տեղերից 4-ը բաժին հասավ Ստեփանակերտի հ.11 ավագ, 1-ը՝ Մարտունու հ.1 միջնակարգ դպրոցների սաներին:

Ըստ արդյունքների հանրապետության տարածքում գործող 3 ավագ, 5 միջնակարգ (հոսքային) և Ստեփանակերտի հ.3 միջնակարգ ու ֆիզմաթ դպրոցների մրցանակային տեղերի և ակտիվ մասնակցության համար պարզևատրվածների քանակն ունի այսպիսի պատկեր.

Համեմատություն անցկացնելով նաև հանրապետության հանրակրթական դպրոցների միջև՝ համոզիպում ենք նաև անհանգստացնող այսպիսի փաստերի.



ՕԼԻՄՊԻԱԴԱ-2015

ԻՖԻ	Շրջանը	Առարկան											Մրցամասի տեղի/գրվածքային			
		Հ.լեզու	Հ. գրակ	Ու. լեզու	Օտ. լեզու	Սայբաժ.	Ֆիզիկա	Քիմիա	Կենսա	Պատմ.	Լեզվաբան	Ինֆորմ.		ՀՅՊ	ՆՁՊ	
1	Ստեփ. հ. 8 ա/դ	-1	-	-1	1/1	-	-	-	-	1/1	-	-	-	-	-	2/4
2	Ստեփ. հ. 11 ա/դ	2/2	2/2	1/1	4/3	-	-	-1	1/1	1/-	-	-1	1/-	4/-	16/10	
3	Շուշի Մուրացանի անվան ա/դ	-	-	-	-1	-	-	-	-	-	-	-	-	-	-1	
4	Ավերբանի մ/դ	-1	-	-	-	-	-	-1	-	-1	-	-	-	-	-3	
5	Մարտակերտի հ.1 մ/դ	-	1/1	-	-	-2	-	-1	1/-	-	-	-	-	-	2/4	
6	Մարտունու հ.1 մ/դ	-	-	1/-	-	-	-	-	1/-	-	-	-	-	1/-	3/-	
7	Ճարտարի հ. 1 մ/դ	-	-	-	-1	-	-	-1	-1	2/1	-	-	1/1	-	3/5	
8	Հարյուրի մ/դ	-1	-	-	2/1	-	-	-	-	-	-	-	-	-	2/2	
9	Ստեփ. հ. 3 մ/դ	-	-	4/3	-	-	-	-	-	-	-	-	-	-	4/3	
10	Ֆիզմաթ	-	-	-2	-	3/2	3/-	-	-	-	-	-	-	-	6/4	

Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական 12 դպրոցներից հ.4, հ. 9 և հ. 12 դպրոցներից օլիմպիադայի հանրապետական փուլին ոչ մի աշակերտ չի ընդգրկվել, իսկ հ. 2 հիմնական դպրոցից մասնակցել են ընդամենը 4 աշակերտ, այն էլ՝ միայն ֆրանսերենից: 3. 3 միջնակարգ դպրոցից մասնակցել են 10 աշակերտ, որից 9-ը՝ ռուսաց լեզու առարկայից, 1 աշակերտ՝ անգլերենից: 3. 5 հիմնական դպրոցը միայն ՆՁՊ առարկայից է ունեցել 2 մասնակից:

Դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլին Շուշիի շրջանից մասնակցել է 15 աշակերտ, որից 14-ը շրջկենտրոնի և Արմավրի անվան հիմնական, Մուրացանի անվան ավագ և Դ. Ղազարյանի անվան երաժշտական մասնագիտացված գիշերօթիկ դպրոցների աշակերտներ են, իսկ 1 աշակերտ Քարին տակի միջնակարգ դպրոցից մասնակցել է ՆՁՊ առարկայից:

Մեկ փաստ ևս. Մարտակերտի շրջանի 4-րդ միջնակարգ դպրոցը, որն ունի 235 աշակերտ, առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլին ունեցել է միայն մեկ մասնակից ռուսաց լեզու առարկայից, իսկ նույն շրջանի 106 աշակերտ ունեցող (2.2 անգամ պակաս) Թալիշի միջնակարգ դպրոցից օլիմպիադային մասնակցել են 5 աշակերտներ՝ տարբեր առարկաներից:

Կամ Մարտունու շրջանի 71 աշակերտ ունեցող Չերեքի միջնակարգ դպրոցից տարբեր առարկաներից մասնակցել է 3 աշակերտ, իսկ նույն շրջանի Կարմիր Շուկայի միջնակարգ դպրոցը, որտեղ սովորում է 223 աշակերտ, օլիմպիադայի



հանրապետական փուլում ոչ մի մասնակից չի ունեցել:

Կարծում ենք՝ հիշյալ դպրոցների տնօրինությունը և համապատասխան շրջվարչակազմների աշխատակազմների կրթության բաժինները խորհելու շատ բան կունենան:

Ինչ խոսք, դեռ անելիքներ շատ կան, բայց ձեռքբերումներն էլ քիչ չեն:

Օլիմպիադայի հանրապետական փուլի ամփոփումից հետո մրցանակային տեղեր գրաված աշակերտների շարքում հաճելիորեն նկատում ենք մեր այն լավագույն աշակերտների անունները, ովքեր 2-րդ և նույնիսկ 3-րդ տարին է՝ գրավում են մրցանակային տեղեր: Այսպես. 10-րդ դասարանի աշակերտուհի Մանե Սարգսյանը հայոց լեզու առարկայից, 11-րդ դասարանի աշակերտուհի Աննա Արզումանյանը անգլերեն և հայոց լեզու առարկաներից, 11-րդ դասարանի աշակերտուհի Ֆլորա Չարյապետյանը անգլերեն լեզու առարկայից Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի սաներ են: Ստեփանակերտի հ. 8 ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ Արման Արյանը պատմություն առարկայից, Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղի 10-րդ դասարանի աշակերտ Սամվել Սաֆարյանը և 11-րդ դասարանի աշակերտ Դավիթ Չարյապետյանը մաթեմատիկա

առարկայից, 11-րդ դասարանի աշակերտ Սերգեյ Չարյապետյանը ֆիզիկա առարկայից, Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանի աշակերտուհի Սյուզաննա Ներսեսյանը, Չարյուքի շրջանի Մարիամաձորի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Չերմինե Արզումանյանը՝ հայ գրականություն առարկայից, Չարյուքի միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Մարգարիտա Մելիքսեթյանը՝ անգլերենից, Դրախտիկի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Էրիկ Չովսեփյանը՝ աշխարհագրություն առարկայից, Ասկերանի շրջանի Խաչենի միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանի աշակերտ Յուրա Մարգարյանը և Խնապատի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Չայկ Մայիլյանը՝ հայոց եկեղեցու պատմություն առարկայից, Մարտունու շրջանի Սպիտակաշեն



նի միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Անի Չարյապետյանը՝ հայոց լեզու առարկայից, ճարտարի հ. 1 միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Ժենյա Չարյուքյանը՝ պատմություն առարկայից և Թաղավարդի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Մարատ Մուսայելյանը՝ ՆՁՊ առարկայից:

Շնորհավորում ենք բոլոր աշակերտներին և շնորհակալություն հայտնում նրանց՝ լավագույն արդյունքի հասնելու համար:

Ուրախացնող փաստ է նաև այն, որ մրցանակային տեղեր գրաված աշակերտների ուսուցիչների մեծ մասը մեր վաստակաշատ, ինչպես նաև երիտասարդ ու եռանդուն ուսուցիչներն են, որոնց սաները հերթական անգամ բարձր պահեցին իրենց դպրոցների անունները: Ուսուցիչների շարքում արդեն որերորդ անգամ կրկնվում են հետևյալ անունները՝ Ստեփանակերտի հ.11 ավագ դպրոցի անգլերենի ուսուցչուհի Զամինկ Սեյրանյան, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհիներ Իրա Սարինյան և Արմենուհի Խանունյան, Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոցի ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհիներ Ջոյա Մարտիրոսյան և Գոհար Աղամյան, Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղի ուսուցիչներ Սուսաննա Ներսեսյան, Աշոտ Ապրեսյան, Ստեփանակերտի հ. 10 հիմնական դպրոցի գինղեկ Վարուժան Աղաջանյան, Ասկերանի շրջանի Խաչենի միջնակարգ դպրոցի հայոց եկեղեցու պատմության ուսուցչուհի Արև Գրիգորյան, Խնապատի միջնակարգ դպրոցի հայոց եկեղեցու պատմության ուսուցչուհի Մարինե Մանգասարյան, Մարտակերտի հ.1 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Նատաշա Պողոսյան, Թալիշի միջնակարգ դպրոցի գինղեկ Ֆեդյա Ապրեսյան, Մարտունու շրջանի Սպիտակաշենի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Լուսինե Եսայան, ճարտարի միջնակարգ դպրոցի պատմության ուսուցչուհի Լուսինե Սաֆարյան, Թաղավարդի միջնակարգ դպրոցի գինղեկ Ջավեն Բադսայան, Չարյուքի շրջանի Մարիամաձորի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Սվետլանա Գրիգորյան, Չարյուքի միջնակարգ դպրոցի անգլերենի ուսուցչուհի Մարիա Ստեփանյան, Դրախտիկի միջնակարգ դպրոցի աշխարհագրության ուսուցիչ Մանվել Չովսեփյան:

ԼՂԴ դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի արդյունքներն ամփոփելով՝ հանրապետական համընթացողովի կազմկոմիտեի որոշմամբ 12 (բա-



ցի ինֆորմատիկայից և ֆրանսերենից) առարկաներից լավագույն արդյունք ցուցաբերած 74 աշակերտներ իրավունք ստացան մասնակցելու նաև Չայաստանի Չանրապետությունում մարտ, ապրիլ և մայիս ամիսներին կայացած օլիմպիադայի եզրափակիչ փուլին: Եվ ունենք հետևյալ արդյունքները.

- հ.լեզու առարկայից՝ մրցանակային երեք 3-րդ տեղ և մեկ գովասանագիր
- հայ գրականություն առարկայից՝ մրցանակային մեկ 3-րդ տեղ
- ռուսաց լեզու առարկայից՝ մրցանակային մեկ 1-ին, մեկ 2-րդ և երկու 3-րդ տեղեր
- օտար լեզու առարկայից՝ մրցանակային մեկ 3-րդ տեղ և մեկ գովասանագիր
- մաթեմատիկա առարկայից՝ մրցանակային մեկ 3-րդ տեղ և 2 գովասանագիր
- ֆիզիկա առարկայից՝ մրցանակային մեկ 3-րդ տեղ
- կենսաբանություն առարկայից ակտիվ մասնակցության համար՝ երկու գովասանագիր
- պատմություն առարկայից՝ մրցանակային մեկ 3-րդ տեղ և երկու գովասանագիր
- քիմիա առարկայից՝ ակտիվ մասնակցության համար մեկ գովասանագիր
- հայոց եկեղեցու պատմություն առարկայից՝ մրցանակային մեկ 1-ին, մեկ 2-րդ, մեկ 3-րդ տեղեր և ակտիվ մասնակցության համար մեկ գովասանագիր
- ՆՁՊ առարկայից օլիմպիադան կանցկացվի մայիսի 18-ին:

Շնորհավորում և շնորհակալություն ենք հայտնում օլիմպիադայի մրցանակակիր բոլոր աշակերտներին և այդ աշակերտների հաջողություններով մշտապես հպարտացող բարեխիղճ ուսուցիչներին:

Սիրելի՛ դպրոցականներ, մեզ համար շատ կարևոր է Արցախում կիրթ, բանիմաց աշակերտների առկայությունը: Տարիներ անց դուք եք շարունակելու Արցախը շենացնելու այսօրվա մեր ջանքերը: Դանդաղված ենք, որ այս ուսումնական տարվա դպրոցականների առարկայական օլիմպիադան գիտելիքի ճանապարհով ձեզ մեկ քայլ ևս առաջ տարավ:

Նմանատիպ միջոցառումների ընթացքում մենք ոչ միայն



բացահայտում ենք լավագույններին, այլև ցույց ենք տալիս մեր հասարակությանն ու ժողովրդին, որ մեր շարքերում կան արժանավոր շատ աշակերտներ, որոնց, իրոք, կարելի է վստահել մեր երկրի ապագան:

Մենք, հիրավի, հպարտանում ենք ձեզանով, ձեր հաջողությունները գրավական են այն բանի, որ դուք շենացնելու եք մեր հայրենի երկիրը, կերտելու նրա վառ ապագան:

**Ռ. ՍՈՒՍԱՅԵՆՆԱՆ**  
**ԿԳ վարչության պետ**

Կ Ա Ր Գ

Հավելված՝  
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
կրթության և գիտության նախարարի  
2013 թվականի ապրիլի 25-ի  
N 90-Ն հրամանի

**Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հանրակրթական Ուսումնական Հաստատությունների Կողմից Կրթական Ծրագրերի Յուրաքանչյուր, Ամփոփյալ Ստուգման Կամ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԱՆՅԱԿԱՅՄԱՆ, ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՓՈԽԱՊՐՄԱՆ ԵՎ ԱՎԱՐՏՄԱՆ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅՑՆԵՐ**

1. Սույն կարգով սահմանվում են հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ Հաստատություն) սովորողի փոխադրման, ամփոփյալ ստուգման կամ ատեստավորման կազմակերպման, ինչպես նաև մեղալի հավակնորդ շրջանավարտին մեղալով պարզատրման և ուսումնական տարվա ընթացքում 180-240 ժամ բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման գործընթացի կազմակերպման հետ կապված իրավահարաբերությունները՝ անկախ Հաստատության կազմակերպիչի կողմից և երկարաժամկետային:

**II. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԴԱՍԱՐԱՆԻՑ ԴԱՍԱՐԱՆ ՓՈԽԱՊՐՈՒՄ ԵՎ ԱՎԱՐՏՈՒՄ**

2. 1-ին դասարանում սովորողը, փոխադրվում է հաջորդ դասարան՝ գիտելիքների անհրաժեշտ նվազագույնի յուրացման պայմանով՝ բնութագրման միջոցով:

Առանձին դեպքերում սովորողը կարող է կրկնել տվյալ ուսումնական տարվա դասընթացը՝

- 1) ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) գրավոր դիմումի և Հաստատության մանկավարժական խորհրդի որոշմամբ,
- 2) դասվարի հիմնավորված առաջարկության հիման վրա՝ Հաստատության մանկավարժական խորհրդի որոշմամբ և ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) գրավոր համաձայնությամբ:
- 3. 2-րդ, 3-րդ, 5-8-րդ, 10-րդ և 11-րդ դասարանների ուսումնական բոլոր առարկաներից տարեկան 4-10 միավոր գնահատված սովորողը փոխադրվում է հաջորդ դասարան:
- 4. 4-րդ դասարանի (հանրակրթական հիմնական ծրագրերի 1-ին աստիճանի) ավարտական դասարան) բոլոր ուսումնական առարկաներից տարեկան և գիտելիքների ստուգումից 4-10 միավոր գնահատված սովորողը փոխադրվում է հաջորդ դասարան:
- 5. 9-րդ դասարանի (հանրակրթական հիմնական ծրագրերի 2-րդ աստիճանի) ավարտական դասարան) բոլոր ուսումնական առարկաներից տարեկան՝ 4-10 միավոր և ավարտական քննություններից՝ 8-20 միավոր գնահատված սովորողը ստանում է հիմնական կրթության վկայական:
- 6. 12-րդ դասարանում (հանրակրթական հիմնական ծրագրերի 3-րդ աստիճանի) ավարտական դասարան) ուսումնական բոլոր առարկաներից տարեկան՝ 4-10 և պետական ավարտական քննություններից՝ 8-20 միավոր, ինչպես նաև «Ֆիզկուլտուրա» և ռուսերենով ուսուցմամբ դասարաններում «Ռուս գրականություն» առարկաների պետական ավարտական քննություններից 4-10 միավոր գնահատված շրջանավարտը ստանում է միջնակարգ կրթության ատեստատ:
- 7. Հաստատությունում որևէ առարկա չդասավանդվելու պատճառով տվյալ առարկայից գնահատական չունեցող սովորողն իր ցանկությամբ այդ առարկայից կարող է քննություն հանձնել էքստեռն կարգով: Այդ քննության արդյունքը հիմք է միջնակարգ կրթության ատեստատում տարեկան, իսկ քննական առարկայի դեպքում՝ քննական և տարեկան գնահատականներ նշանակելու համար:
- 8. 2-րդ, 3-րդ, 5-8-րդ, 10-րդ և 11-րդ դասարաններում մինչև երկու առարկաներից տարեկան 1-3 միավոր գնահատված սովորողի փոխադրման կամ ավարտման հարցը որոշվում է

օգոստոսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում, նրա հանձնած վերաքննությունների արդյունքներով: Վերաքննությունների առաջարկանքները մշակվում են Հաստատության համապատասխան մեթոդիավորման կողմից:

9. 9-րդ դասարանի սովորողը, որի տարեկան 1-3 (կամ) ավարտական քննություններից՝ 1-7 միավորների ընդհանուր թիվը չի գերազանցում երկուսը, վերաքննությունները հանձնում է օգոստոսի 20-30-ը:

10. 2-րդ, 3-րդ, 5-8-րդ և 10-րդ դասարաններում վերաքննության արդյունքում մեկ կամ երկու առարկայից 1-3 միավոր գնահատված սովորողը՝

- 1) չի փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում է դասընթացը կամ
- 2) ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա փոխադրվում է հաջորդ դասարան՝ պայմանով, որ մինչև հաջորդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ավարտը պետք է հանձնի 1-3 միավոր գնահատված առավելագույն մեկ առարկայի քննությունը, իսկ երկրորդը՝ մինչև 2-րդ կիսամյակի ավարտը: Սույն կետում նշված վերաքննությունները չհանձնելու դեպքում սովորողը կրկնում է սույն կարգի 10-րդ կետում նշված պայմանով փոխադրված դասարանի դասընթացը՝ անկախ տվյալ դասարանում ստացած գնահատականներից:

11. 11-րդ դասարանում վերաքննության արդյունքում մեկ կամ երկու առարկայից 1-3 միավոր գնահատված սովորողը՝

- 1) չի փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում է դասընթացը կամ
  - 2) ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա փոխադրվում է հաջորդ դասարան՝ պայմանով, որ մինչև հաջորդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ավարտը պետք է հանձնի երկու առարկաների վերաքննությունները:
- Սույն կետով նշված վերաքննությունները չհանձնելու դեպքում սովորողը կրկնում է սույն կետում նշված պայմանով փոխադրված դասարանի դասընթացը՝ անկախ տվյալ դասարանում ստացած գնահատականներից:

12. 2-րդ, 3-րդ, 5-8-րդ, 10-րդ և 11-րդ դասարանների ուսումնական երեք և ավելի առարկաներից տարեկան 1-3 միավոր գնահատված սովորողները կրկնում են տվյալ ուսումնական տարվա դասընթացը:

13. 4-րդ դասարանի երեք և ավելի ուսումնական առարկաներից տարեկան և գիտելիքների ստուգումից 1-3 միավոր գնահատված սովորողը կրկնում է տվյալ ուսումնական տարվա դասընթացը:

14. 16 տարին չլրացած 9-րդ դասարանի և 19 տարին չլրացած 12-րդ դասարանի սովորողը կրկնում է տվյալ ուսումնական տարվա դասընթացը, եթե՝

- 1) երեք և ավելի ուսումնական առարկաներից տարեկան 1-3 միավոր է գնահատվել,
- 2) ավարտական քննությունների ընթացքում 1-7 և տարեկան 1-3 միավորների ընդհանուր թիվը կազմում է երեք և ավելի,
- 3) վերաքննությունները հանձնելուց հետո առնվազն մեկ ուսումնական առարկայից ստացել է 1-7 միավոր:

15. Սույն կարգի 10-րդ կետի 1-ին ենթակետի, 11-րդ կետի 1-ին ենթակետի, 12-րդ, 13-րդ, և 14-րդ կետերի համաձայն՝ հանրակրթական ծրագիրը կրկնող սովորողի համար ուսուցում կազմակերպելու նպատակով Հաստատության տնօրենի հրամանով ստեղծվում է առարկայական մասնագիտական խումբ:

Հիմք ընդունելով մասնագիտական խմբի կարծիքը և առաջարկությունները սովորողի փաստացի առարկայական գիտելիքների մասին՝ Հաստատության տնօրենը հաստատում է

ուսումնական պլանով նախատեսված առարկաներից անհատական ուսուցման ծրագրեր և լրացուցիչ պարապմունքների ժամանակացույց:

16. Սովորողին ամառային առաջադրանք տալու կամ դասընթացը կրկնելու վերաբերյալ Հաստատության մանկավարժական խորհրդի որոշման մասին, տնօրենի հանձնարարությամբ, սովորողի ծնողին (օրինական ներկայացուցչին) տեղյակ է պահում դասուցելը՝ մանկավարժական խորհրդի միտքից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ գրավոր ծանուցմամբ:

17. 16-19 տարեկան 9-րդ դասարանի սովորողը ծնողի (կամ օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա կարող է թողնել Հաստատությունը, եթե՝

- 1) երեք և ավելի ուսումնական առարկաներից տարեկան 1-3 միավոր է գնահատվել,
- 2) ավարտական քննությունների արդյունքում 1-7 և տարեկան 1-3 միավորների ընդհանուր թիվը կազմում է երեք և ավելի ուսումնական առարկաներից,
- 3) վերաքննությունների արդյունքում առնվազն մեկ առարկայից ստացել է 1-7 միավոր:

18. 19 տարին լրացած՝ երեք և ավելի ուսումնական առարկաներից տարեկան 1-3 (կամ) քննական 1-7 միավոր գնահատված 9-րդ և 12-րդ դասարանների սովորողը դուրս է մնում Հաստատությունից:

19. Մինչև 19 տարեկան 12-րդ դասարանի սովորողը, տարեկան 1-3 (կամ) ավարտական քննություններից 1-7 միավոր գնահատված լինելու դեպքում (եթե ընդհանուր թիվը չի գերազանցում երկուսը), վերաքննություն է հանձնում՝ «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա», «Բնագիտություն» և «Հայոց պատմություն» առարկաներից՝ հուլիսի 2-8-ն և (կամ) օգոստոսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում՝ իր Հաստատությունում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ԳՈԿ) քննական առաջադրանքներով, իսկ ուսումնական պլանով նախատեսված մյուս առարկաներից՝ իրենց Հաստատության մեթոդիավորումների կողմից մշակված քննական առաջադրանքներով՝ օգոստոսի 20-30-ը:

19.1 Սույն կարգի 19-րդ կետով նախատեսված քննությունները չհանձնելու դեպքում 12-րդ դասարանի, ինչպես նաև 16 տարին լրացած 9-րդ դասարանի այն սովորողները, որոնց տարեկան գնահատականները ամփոփվել են, ավարտական կամ պետական ավարտական քննություններից գնահատվել են 1-3 և (կամ) 1-7 միավոր կամ չեն մասնակցել ավարտական կամ պետական ավարտական քննություններին՝ կարող են հաջորդ տարի իրենց Հաստատությունում հանձնել քննություններ, ստանալ միջնակարգ կրթության ատեստատ կամ հիմնական կրթության վկայական:

20. 19 տարին լրացած 9-րդ և 12-րդ դասարանի արական սեռի սովորողները, քննաշրջանի ավարտից հետո տարեկան 1-3 (կամ) քննական 1-7 միավոր գնահատված լինելու դեպքում դուրս են մնում Հաստատությունից: Այդ սովորողները իրավունք ունեն քննություն(ներ) հանձնել և հիմնական կրթության վկայական կամ միջնակարգ կրթության ատեստատ ստանալ:

- 1) զորացրվելուց անմիջապես հետո իրենց ուսումնառած Հաստատությունում՝ ավարտական, պետական ավարտական քննությունների և (կամ) վերաքննությունների համար սահմանված ժամկետներում,
- 2) ընթացիկ տարվա գարնանային զորա-

կոչին զինվորական ծառայության մեկնածուներ՝ օգոստոսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում՝ զորամասի հրամանատարության համաձայնությամբ՝ իրենց Հաստատությունում,

3) ծառայության ընթացքում՝ զորամասի հրամանատարության համաձայնությամբ՝ իրենց Հաստատությունում, ավարտական, պետական ավարտական քննությունների և (կամ) վերաքննությունների համար սահմանված ժամկետներում:

21. 19 տարին լրացած 9-րդ և 12-րդ դասարանի իգական սեռի, ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայության չզորակոչված քաղաքացիներին իրավունք է վերապահվում հաջորդ տարին նույն Հաստատությունում հանձնել քննություններ այդ առարկաներից, իսկ նոր բնակավայր տեղափոխվելու դեպքում՝ այդ բնակավայրում գտնվող Հաստատություններից մեկում:

22. 9-րդ և 12-րդ դասարանների քննական առարկաներից տարեկան 1-3 միավոր գնահատված սովորողների վերաքննությունների արդյունքները հիմք են հիմնական կրթության վկայականում և միջնակարգ կրթության ատեստատում տարեկան և քննական գնահատականներ նշանակելու համար:

«Հայոց լեզու», «Գրականություն», «Հայ գրականություն», «Հանրահաշիվ», «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» և «Երկրաչափություն» առարկաներից տարեկան գնահատականները նշանակվում են «Հայոց լեզու, գրականություն», «Հայոց լեզու, հայ գրականություն» և «Մաթեմատիկա» քննական առարկաների գնահատականների հիման վրա:

23. 12-րդ դասարանի սովորողի կողմից, բնագիտական կամ օտար լեզուների առարկայախմբից, որպես միասնական քննություն (այսուհետ՝ Միասնական քննություն) երկու առարկա ընտրելու դեպքում, միջնակարգ կրթության ատեստատում լրացվում է սովորողի կողմից նախընտրած առարկայի Միասնական քննության ավարտական մասի գնահատականը:

24. Բնագիտական կամ օտար լեզուների առարկայախմբի 2 առարկաներից վերաքննություններ հանձնելու դեպքում միջնակարգ կրթության ատեստատում քննական գնահատականը լրացվում է սովորողի ընտրությամբ:

25. Սույն կարգի 17-րդ կետի, 18-րդ, 19-րդ, 20-րդ կետերի 1-ին ենթակետով և 23-րդ կետի պահանջներին համապատասխան՝ քննություն չհանձնած սովորողներին հետագայում իրավունք է վերապահվում ընդհանուր հիմունքներով հանձնել էքստեռն ավարտական քննություններ և ստանալ Հաստատության ավարտական փաստաթուղթ (վկայական կամ ատեստատ):

26. 2-8-րդ, 10-րդ և 11-րդ դասարաններում տարեկան 9-10 միավոր գնահատված սովորողը պարզատրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) գովասանագրով:

27. 8-րդ և 9-րդ դասարանի ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաներից տարեկան 9-10 և քննական 18-20 միավոր գնահատված սովորողը ստանում է «Գերազանցության» նշումով հիմնական կրթության վկայական: Որևէ առարկայից (բացի առողջության պատճառով «Ֆիզկուլտուրա», «Նախնական զինվորական պատրաստություն» և անվտանգ կենսագործունեություն) առարկաներից ազատված լինելու դեպքերը) չգնահատված՝ հիմնական դպրոցի սովորողը «Գերազանցության» նշումով հիմնական կրթության վկայական չի ստանում:

28. 12-րդ դասարանում տարեկան 9-10

ԿԱՐԳ

միավոր գնահատված սովորողը
Հաստատության կողմից ներկայացվում է որպես գերազանցության մեդալի (այսուհետ՝ Մեդալ) հավակնորդ՝ պահպանելով սույն կարգի 47 և 48 կետերի պահանջները:

29. Ուսումնական առարկաներից տարեկան գնահատականներ նշանակում են դասավանդող ուսուցիչներն ուսումնական պարապմունքների վերջին շաբաթվա ընթացքում՝ հաշվի առնելով սովորողի կիսամյակային գնահատականները:

30. «Ֆիզկուլտուրա», «Նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն» առարկաների պարապմունքներից առողջական վիճակի պատճառով սովորողի ազատված լինելը, ինչպես նաև չդասավանդելու պատճառով որևէ առարկայից տարեկան գնահատական չունենալը չի ազդում նրա՝ հաջորդ դասարան փոխադրվելու կամ Հաստատությունն ավարտելու վրա:

III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ 180-240 ԺԱՄ ԲԱՑԱԿԱՅԱԾ ՍՈՎՈՐՈՂԻ՝ ՀԱՋՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ ԿԱՄ ՀԱՆՐԱՎԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՐԴ ԱՍՏԻՃԱՆ ՓՈՒՆԱԴՐՈՒՄԸ

31. Ուսումնական տարվա ընթացքում, մինչև սույն կարգի 32-րդ կետով սահմանված ժամկետում 180-240 ժամ դասերից բացակայած 2-12-րդ դասարանների սովորողի՝ հաջորդ դասարան փոխադրվելու կամ Հաստատությունից դուրս մնալու հարցը քննարկվում է Հաստատության մանկավարժական խորհրդում, մինչև մայիսի 15-ը:

32. Սովորողի բացակայությունների հաշվառումն իրականացվում է ուսումնական տարվա ընթացքում և ամփոփվում է ուսումնական պարապմունքների ավարտից 15 օր առաջ:

33. Հաստատության տնօրենը հաստատում է 5 քննական առարկաների ցանկը, ժամանակացույցը և տեղեկացնում է Նախարարությանն ու լիազոր մարմնին: Քննություններին կարող են մասնակցել Նախարարության և (կամ) լիազոր մարմնի ներկայացուցիչը (ները):

34. Հաստատության մանկավարժական խորհուրդը կազմում և տնօրենի հաստատման է ներկայացնում տեղեկանք՝ 2-12-րդ դասարանների սովորողի բացակայությունների քանակի, դրանց բնույթի վերաբերյալ:

1) 240 ժամից ավելի հարգելի պատճառով բացակայած սովորողներին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի (այսուհետ՝ Նախարար) կողմից բացառության կարգով կարող է թույլատրվել հանձնել քննություններ 5 առարկաներից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմերի կրթության բաժինների (այսուհետ՝ Կրթության բաժիններ) վարիչների պատճառաբանված ներկայացման հիման վրա:

2) Նախարարությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է որոշում և տեղեկացնում է Հաստատության տնօրենին:

35. Բոլոր դասարանների քննական առաջադրանքները մշակվում են Հաստատության մեթոդիկավորումների կողմից՝ առնվազն 3 տարբերակով:

36. Քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների հիման վրա նշանակվում են սովորողի տարեկան գնահատականները:

37. Որևէ կիսամյակում 180-240 ժամ բացակայության դեպքում սովորողի կիսամյակային գնահատականները չեն նշանակվում՝ անկախ ընթացիկ գնահատականների առկայությունից:

1) Տվյալ կիսամյակի կիսամյակային և տարեկան գնահատականները որոշվում են լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների միջոցով՝ մանկավարժական խորհրդի կողմից սահմանված ժամանակացույցի՝ սույն կարգի համաձայն:

2) Ուսումնական տարվա ընթացքում 180-240 ժամ բացակայության դեպքում բոլոր առարկաների տարեկան գնահատականները որոշվում են լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների միջոցով՝ սույն կարգի համաձայն:

փոփիչ ստուգողական աշխատանքների միջոցով՝ մանկավարժական խորհրդի կողմից սահմանված ժամանակացույցի՝ սույն կարգի համաձայն:

38. 240 ժամից ավելի բացակայելու կամ սույն կարգի 33-րդ և 36-րդ կետերով նախատեսված քննություններից և ամփոփիչ ստուգողական աշխատանքներից (10 միավորային համակարգում) 1-3 միավոր գնահատված լինելու դեպքում՝ սովորողը կրկնում է դասընթացը, իսկ 9-րդ և 12-րդ դասարանների՝ 19 տարին լրացած սովորողը դուրս է մնում ուսումնական հաստատությունից:

VI. ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՑ ԱՆՑԿԱՅՈՒՄԸ

39. Հաստատությունների 4-րդ, 9-րդ և 12-րդ դասարանների սովորողների գիտելիքների ստուգումը, ավարտական և պետական ավարտական, այդ թվում՝ ուսման մեջ գերազանց առաջադիմության համար Մեդալի հավակնորդների քննությունների կազմակերպումն ու անցկացումն իրականացվում է սույն կարգի և Նախարարի՝ տվյալ ուսումնական տարվա համար հաստատած սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույցի և աշխատակարգի համաձայն:

40. 9-րդ և 12-րդ դասարանների սովորողները «Հանրահաշիվ», «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» և (կամ) «Երկրաչափություն» առարկաներից տարեկան 1-3 միավոր գնահատված լինելու դեպքում չեն մասնակցում «Մաթեմատիկայի» ավարտական, 12-րդ դասարանում՝ պետական ավարտական քննություններին:

41. 9-րդ և 12-րդ դասարանի սովորողների համար «Մաթեմատիկա» առարկայի վերաբերյալ արդյունքը հիմք է հանդիսանում հիմնական կրթության վկայականում՝ «Երկրաչափություն» և «Հանրահաշիվ», միջնակարգ կրթության ատեստատում՝ «Երկրաչափություն» ու «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» առարկաներից տարեկան, «Մաթեմատիկա» առարկայից քննական գնահատական նշանակելու համար:

42. 9-րդ և 12-րդ դասարանների սովորողները, «Հայոց լեզու» կամ «Գրականություն» («Հայ գրականություն») առարկաներից կամ երկուսից միաժամանակ տարեկան 1-3 միավոր ունենալու դեպքում չեն մասնակցում 9-րդ դասարանում «Հայոց լեզու, գրականություն» առարկայի ավարտական, 12-րդ դասարանում՝ «Հայոց լեզու և հայ գրականություն» պետական ավարտական քննություններին և հանձնում են վերաքննություն սույն կարգի 19-րդ կետում նշված ժամանակահատվածներում: Վերաքննությունների արդյունքները հիմք են հանդիսանում հիմնական կրթության վկայականում «Հայոց լեզու», «Գրականություն» առարկաներից տարեկան և «Հայոց լեզու, գրականություն» առարկայից քննական և միջնակարգ կրթության ատեստատում «Հայոց լեզու», «Հայ գրականություն» առարկաներից տարեկան և «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից քննական գնահատականներ նշանակելու համար:

43. Եթե 9-րդ կամ 12-րդ դասարանի սովորողը «Հայոց լեզու» առարկան ուսումնասիրել է վերջին երկու ուսումնական տարիներին, ապա հիմնական կրթության վկայականում կամ միջնակարգ կրթության ատեստատում այդ առարկայի համապատասխան տողում սովորողի ցանկությամբ կարող է գրվել՝ «չի ուսումնասիրել» բառերը: Սովորողն իր ցանկությամբ կարող է ազատվել 9-րդ դասարանում «Հայոց լեզու, գրականություն» առարկայի ավարտական և 12-րդ դասարանում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի պետական ավարտական քննություններից: Այդ դեպքում ավարտական փաստաթղթի համապատասխան տողում գրվում է՝ «ազատված է»:

Սույն կետում նշված գրառումների բացակայության դեպքում սովորողը մասնակցում է «Հայոց լեզու, գրականություն» առարկայի ավարտական և 12-րդ դասարանում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի պետական ավարտական քննությունները հանձնում են կենտրոնացված կարգով:

լեզու և հայ գրականություն» առարկայի պետական ավարտական քննություններին:

44. Հաստատությունների պետական ավարտական քննությունները կազմակերպելու և վերահսկելու նպատակով Նախարարի հրամանով ստեղծվում է հանրապետական հանձնաժողով:

45. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք՝ մտավոր հետամնացություն ունեցող սովորողները ազատվում են գիտելիքների ստուգումից (4-րդ դասարան), ավարտական (9-րդ դասարան) և պետական ավարտական (12-րդ դասարան) քննություններից: Նրանց տրվում է պետական մուշի ավարտական փաստաթուղթ (հիմնական կրթության վկայական և միջնակարգ կրթության ատեստատ)՝ առանց քննական գնահատականների:

V. ՈՒՍՄԱՆ ՄԵՋ ԳԵՐԱՋՆԱՑ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄԵԴԱԼԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

46. Մեդալի ներկայացվում է 9-րդ դասարանը հիմնական կրթության գերազանցության վկայականով ավարտած և 10-12-րդ դասարաններում բոլոր առարկաներից տարեկան 9 կամ 10 միավոր գնահատված սովորողը:

47. Ուսումնական պլանով նախատեսված որևէ առարկայից չգնահատված սովորողը, որպես Մեդալի հավակնորդ, չի ներկայացվում՝ բացառությամբ հետևյալ դեպքերի.

1) առողջության պատճառով «Տեխնոլոգիա», «Ֆիզկուլտուրա», «Նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն» առարկաներից ազատված լինելը,

2) առանձին գործող ավագ դպրոցների բնագիտամաթեմատիկական և արհեստագործական հոսքերում ուսումնառության երեք տարիների ընթացքում «Հայոց եկեղեցու պատմություն», «Համաշխարհային պատմություն» առարկաների՝ ուսումնական պլաններով չնախատեսված լինելը,

3) միջազգային պայմանագրի համաձայն՝ ուսումնառության ընթացքում մեկ անգամ, մեկ տարի արտերկրում ուսում ստացած և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն վերադարձած սովորողի կողմից առանձին առարկաներ չուսումնասիրելը,

4) դպրոցում համապատասխան մասնագետի բացակայության պատճառով որևէ առարկա չուսումնասիրելը:

48. Մեդալի հավակնորդ սովորողների նախնական ցուցակները մինչև տվյալ ուսումնական տարվա մարտի 21-ը Հաստատությունները ներկայացնում են Կրթության բաժիններ, իսկ Նախարարության ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների նախնական ցուցակները՝ Նախարարություն:

49. Մինչև մայիսի 10-ը Կրթության բաժինները և Նախարարությունը Հաստատություններում ստուգում են ներկայացված փաստաթղթերի օրինականությունն ու հիմնավորվածությունը:

Մինչև մայիսի 10-ը կրթության բաժինները նախնական ցուցակները ներկայացնում են Նախարարություն: Ներկայացված Մեդալի հավակնորդների փաստաթղթերը Նախարարությունում կարող են կրկնակի ուսումնասիրվել:

50. Նախարարությունը մինչև մայիսի 25-ը Կրթության բաժիններ է ներկայացնում Մեդալի հավակնորդների վերջնական ցուցակները:

VI. ՄԵԴԱԼԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԴՐԱԳԵՎԱՏՐՈՒՄԸ

51. Մեդալի հավակնորդ բոլոր սովորողները (անկախ ուսումնական հաստատության ենթակայությունից և հաստատությունում ուսուցման լեզվից), այդ թվում՝ սույն կարգի 47-րդ կետի 1-4 ենթակետերի հիմքով քննություններին մասնակցող սովորողները, «Հայոց լեզու և հայ գրականություն» և (կամ) «Մաթեմատիկա» առարկաների պետական ավարտական քննությունները հանձնում են կենտրոնացված կարգով:

1) Մեդալի հավակնորդ այն սովորողները,

որոնց համար «Հայոց լեզու և հայ գրականություն» և (կամ) «Մաթեմատիկա» առարկաները համարվում են բուհական ընդունելության մրցութային քննություն, քննություն են հանձնում միասնական համակարգով (պետական ավարտական քննության միավորները հաշվարկվում են միասնական քննության ավարտական մասի գնահատականի հիման վրա):

52. «Հայոց լեզու և հայ գրականություն» և (կամ) «Մաթեմատիկա» առարկաները ոչ մրցութային լինելու դեպքում Մեդալի հավակնորդի համար հիմք է կենտրոնացված համակարգով հանձնված պետական քննական առարկայի գնահատականը:

53. Կենտրոնացված համակարգով հանձնվող «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաներից պետական ավարտական քննություններն անցկացվում են Նախարարության կողմից նախապես որոշված՝ Ստեփանակերտ քաղաքի որևէ Հաստատությունում՝ տվյալ քննությունների համար սահմանված օրերին:

Պետական ավարտական քննությունների նախապատրաստման համար պատասխանատու է Հաստատության տնօրենը: Քննությունների ընթացքը և աշխատանքների ստուգումը վերահսկում են Նախարարության ներկայացուցիչները:

54. «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաների քննական աշխատանքները ստուգվում են Նախարարի հրամանով ստեղծված ստուգող հանձնաժողովի կողմից՝ քննության հաջորդ օրը՝ ժամը 11.00-ից՝ ԳԹԿ համակարգչային կայքում տեղադրված թեստերի ճիշտ պատասխանների հիման վրա: Ստուգող հանձնաժողովի նախագահը ի պաշտոնե Նախարարության ներկայացուցիչն է: Հանձնաժողովի անդամները չեն կարող լինել տվյալ առարկայի մասնագետներ: Քննական գրավոր աշխատանքները, մինչև դրանց ստուգման ավարտը, պահվում են քննական հանձնաժողովի նախագահի մոտ:

«Հայոց պատմություն», «Բնագիտություն» («Ֆիզիկա», «Բիմիա», «Կենսաբանություն» կամ «Վշխարհագրություն» առարկաներից՝ Մեդալի հավակնորդի ընտրությամբ), «Օտար լեզու» (ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլ լեզուներ՝ Մեդալի հավակնորդի ընտրությամբ), «Ֆիզկուլտուրա» ավարտական պետական քննությունները Մեդալի հավակնորդը հանձնում է իր Հաստատությունում՝ նույն կարգով, ինչ կարգով մյուս շրջանավարտները: Նշված առարկաների քննությունների անցկացումը վերահսկվում է Նախարարության կողմից:

55. Մեդալի հավակնորդ սովորողի, ինչպես նաև Հաստատության մյուս սովորողների համար քննական առաջադրանքները բովանդակությամբ ու կառուցվածքով նույնն են:

56. Մինչև հունիսի 25-ը Հաստատությունը Կրթության բաժին է ներկայացնում տեղեկանք՝ Հաստատությունում մյուս չորս առարկաներից Մեդալի հավակնորդ շրջանավարտի հանձնած պետական քննությունների արդյունքների մասին: Ստացված արդյունքները ընդհանրացվում են Կրթության բաժիններում և մինչև հունիսի 28-ը ներկայացվում են Նախարարություն: Նախարարության ենթակայության Հաստատությունները սույն կետով նախատեսված տեղեկանքը նույն ժամկետում ներկայացնում են Նախարարություն:

57. Ավարտական քննություններից 20 միավորային համակարգում՝ 18, 19, 20 կամ 10 միավորային համակարգում՝ 9, 10 միավոր ստացած Մեդալի հավակնորդները պարգևատրվում են Մեդալով:

ԿԱՐԳ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ Հ Ր Ա Մ Ա Ն

«05» մայիսի 2015թ.

ք.Ստեփանակերտ

N 91-Մ

2014-2015 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍՈՎՈՐՈՂԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ԱՎԱՐՏԱԿԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԱՆՅՎԱՅՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ ենթակետին համապատասխան՝ **ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Հաստատել 2014-2015 ուսումնական տարվա սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական, պետական ավարտական քննությունների կազմակերպման, անցկացման աշխատակարգը եվ ժամանակացույցը՝ համաձայն Հավելվածի:
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ընդհանուր բաժնին՝ հաստատված աշխատակարգը և ժամանակացույցը ներկայացնել «Լուսարար» թերթի խմբագրությանը՝ առաջիկա համարում տպագրելու համար և տեղակայել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կայք-էջում:
3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Ս.Համբարձումյանին:

Ս.ԱՄՐՅԱՆ

Հավելված՝  
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
կրթության և գիտության նախարարի  
2015 թվականի մայիսի 5-ի  
N 91-Մ հրամանի

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

2014-2015 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍՈՎՈՐՈՂԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ԱՎԱՐՏԱԿԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՅՎԱՅՄԱՆ

1. Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում՝ անկախ դրանց կազմակերպիչական ձևից, ենթակայությունից և ուսուցման լեզվից (այսուհետ՝ Հաստատություն), 2014-2015 ուստարվա ուսումնական պարապմունքներն ավարտվում են 2015թ. մայիսի 23-ին՝ ապահովելով առնվազն 30 ուսումնական շաբաթ՝ 1-ին դասարանների, առնվազն 32 ուսումնական շաբաթ՝ 2-րդ դասարանների և առնվազն 34 ուսումնական շաբաթ՝ 3-12-րդ դասարանների համար:

2. Հունիսի 1-22-ը Հաստատությունների 4-րդ, 9-րդ և 12-րդ դասարաններում անցկացվում են համապատասխանաբար՝ գիտելիքների ստուգում, ավարտական և պետական ավարտական քննություններ: Քննությունները սկսվում են առավոտյան ժամը 10:00-ին: Սովորողները Հաստատություն են ներկայանում ժամը 9:00-ին:

3. Մինչև մայիսի 21-ը Հաստատության տնօրինությունն ուսուցիչներին, համապատասխան դասարանների սովորողներին և նրանց ծնողներին ծանոթացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի ապրիլի 25-ի N 90-Ն հրամանով հաստատված «Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման և ավարտման» կարգին և սույն աշխատակարգին:

4. Ուսման մեջ գերազանց առաջադիմության համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գերազանցության մեդալի (այսուհետ՝ Մեդալ) հավակնորդ սովորողները թույլատրվում են քննության՝ համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն) ներկայացված վերջնական ցուցակի:

5. Քննությունների միջև ընկած օրերին դասավանդող ուսուցիչները սովորողների համար քննական առարկաներից կազմա-

կերպում են խորհրդատվություններ՝ Հաստատության տնօրենի կողմից հաստատված ժամանակացույցով:

6. 4-րդ դասարանում գիտելիքների ստուգումն անցկացվում է. «Մայրենի» առարկայից՝ **հունիսի 3-ին** (թեստ), և «Մաթեմատիկա» առարկայից՝ **հունիսի 6-ին** (գրավոր): Ռուսերենով ուսուցմամբ դասարաններում՝ «Ռուսաց լեզու» առարկայից (թեստ) **հունիսի 8-10-ը** ընկած ժամանակահատվածում:

1) 4-րդ դասարանում գիտելիքների ստուգման առաջադրանքները կազմվում են Նախարարության գնահատման և թեստավորման կենտրոնում (այսուհետ՝ ԳԹԿ): Առաջադրանքների նյութն ընտրվում է Նախարարության կողմից երաշխավորված և Հաստատությունում գործածվող դասագրքերից:

Ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար սահմանվող քննություններն անց են կացվում քննաշրջանի ընթացքում, քննական առաջադրանքները կազմվում են Հաստատության մեթոդիկավորումները և տնօրենի հրամանով ստեղծվում է քննական հանձնաժողով՝ մեթոդական միավորումների անդամներից:

2) Հաստատության տնօրենը հաստատում է առաջադրանքները, կնքում և ծրարում: Ծրարներից մեկը բացվում է գիտելիքների ստուգման օրը՝ քննասենյակում, սովորողների ներկայությամբ:

3) Գրավոր աշխատանքի կատարման համար տրվում է 45 րոպե, գնահատումը՝ 10 միավորային համակարգով:

4) Գիտելիքների ստուգումն իրականացնում են դասավանդող ուսուցիչները և տնօրենի կողմից նշանակված ներկայացուցիչը:

5) Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար լրացուցիչ տրվում է 30 րոպե՝ ապահովելով երեխայի կարիքին համապատասխան պայմաններ:

7. 9-րդ դասարանի ավարտական քննություններն անցկացվում են.

- 1) «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից՝ **հունիսի 1-ին** (գրավոր), քննությանը տրվում է 120 րոպե:
- 2) «Բնագիտություն» («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն») առարկայից՝ աշակերտի ընտրությամբ, **հունիսի 4-ին** (գրավոր), քննությանը տրվում է 120 րոպե:
- 3) «Մաթեմատիկա» առարկայից՝ **հունիսի 10-ին** (գրավոր), քննությանը տրվում է 120 րոպե:
- 4) «Օտար լեզու» («Ռուսերեն», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն» և այլ լեզուներ) առարկայից՝ աշակերտի ընտրությամբ՝ **հունիսի 15-ին** (գրավոր), քննությանը տրվում է 90 րոպե:
- 5) «Հայոց պատմություն» առարկայից՝ **հունիսի 18-ին** (գրավոր), քննությանը տրվում է 120 րոպե:
- 6) «Ռուսաց լեզու» առարկայից՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար՝ **հունիսի 22-ին** (գրավոր), քննությանը տրվում է 90 րոպե:
8. 12-րդ դասարանում պետական ավարտական քննություններն անցկացվում են.
  - 1) «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից **հունիսի 3-ին** (գրավոր), քննությանը տրվում է 120 րոպե:
  - 2) «Բնագիտություն» («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն») առարկայից՝ աշակերտի ընտրությամբ՝ **8-ին** (գրավոր), քննությանը տրվում է 120 րոպե:
  - 3) «Մաթեմատիկա»- առարկայից **հունիսի 11-ին** (գրավոր), քննությանը տրվում է 120 րոպե:
  - 4) «Օտար լեզու» («Ռուսերեն», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն» և այլ լեզուներ) առարկայից՝ **հունիսի 17-ին** (գրավոր), քննությանը տրվում է 90 րոպե:
  - 5) «Հայոց պատմություն»- առարկայից **հունիսի 22-ին** (գրավոր), քննությանը տրվում է 120 րոպե:
  - 6) Ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար սահմանվում է քննություն «Ռուս գրականություն» առարկայից (բանավոր):

Քննությունն անցկացվում է քննաշրջանի ընթացքում, քննության անցկացման օրը որոշում է մանկավարժական խորհուրդը: Քննական հանձնաժողովը ստեղծվում է Հաստատության տնօրենի հրամանով՝ առարկայական մեթոդական միավորումների անդամներից:

9. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար լրացուցիչ տրվում է 30-ից 40 րոպե՝ ապահովելով երեխայի կարիքին համապատասխան պայմաններ:

10. 9-րդ և 12-րդ դասարաններում քննություններն անցկացվում են ԳԹԿ-ի կազմած թեստերով (այդ թվում նաև՝ վերաքննությունները), գնահատումը՝ 20 միավորային համակարգով:

11. Քննության սկիզբը հայտարարվելուց հետո ուշացած սովորողների մուտքը քննասենյակ արգելվում է:

12. Սովորողը քննություններին ներկայանում է անձը հաստատող փաստաթղթով՝ անձնագրով կամ ծննդյան վկայականով:

13. Հանրակրթական Հաստատությունների գարգացման մտավոր առանձնահատուկություններ ունեցող սովորողների գիտելիքների ստուգումը և ամփոփումը կատարվում է՝ համաձայն անհատական ուսուցման պլանների (ԱՈՒՊ):

14. «Ֆիզկուլտուրա» առարկայի քննությունները կազմակերպվում են հանրակրթական մյուս առարկաների քննություններն սկսելուց առնվազն 5 օր առաջ: «Ֆիզկուլտուրա» առարկայի ավարտական և պետական ավարտական քննություններն ընդունվում են Հաստատության տնօրենի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից՝ հետևյալ կազմով. հանձնաժողովի նախագահ, դասավանդող (քննող) ուսուցիչ և հանձնաժողովի երկու անդամներ:

Քննություններն անցկացվում են՝ համաձայն Նախարարության կողմից հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական դպրոցների 9-րդ և 12-րդ ավարտական դասարանների «Ֆիզկուլտուրա» առարկայի քննությունների նորմա-



ԿԱՐԳ

տիվային պահանջների, գնահատումը՝ 10 միավորային համակարգով:

15. Երեկոյան և հատուկ հանրակրթական դպրոցներում նույնպես գործում է սույն աշխատակարգը՝ պահպանելով ավարտական դասարանների համապատասխանությունը:

16. Քննական գրավոր աշխատանքները, մինչև դրանց ստուգման ավարտը, պահպանվում են քննական հանձնաժողովի նախագահի մոտ, ապա՝ սահմանված կարգով արխիվացվում:

17. Քննությունից բացակայած կամ ուշացած Մեղալի հավակնորդ սովորողը գրվում է Մեղալ ստանալու իրավունքից:

18. Մեղալի հավակնորդները քննություններին ներկայանում են անձը հաստատող փաստաթղթով՝ անձնագրով, ծննդյան վկայականով կամ Հաստատության տնօրենի կողմից տրված տեղեկանքով՝ լուսանկարի առկայությամբ:

19. Ավարտական և պետական ավարտական քննությունները կազմակերպվում են ավարտական քննական կենտրոնում:

9-րդ դասարանի «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաների ավարտական քննությունները կազմակերպվում են կենտրոնացված կարգով՝ Նախարարի հրամանով հաստատված քննական կենտրոններում:

20. Քննական կենտրոն է դառնում յուրաքանչյուր Հաստատություն: Հաստատության տնօրենը կամ նրան փոխարինող անձն ի պաշտոնե տվյալ ավարտական քննական կենտրոնի ղեկավարն է:

21. Քննական կենտրոնում քննության ընթացքը կազմակերպելու համար քննական կենտրոնի ղեկավարը կարող է նշանակել օգնական, հերթապահներ:

22. Քննական կենտրոնի ղեկավարը, մինչև քննության օրը, ԳԹԿ ներկայացուցչից կամ ԳԹԿ համացանցային կայքի միջոցով ստանում է տվյալ քննական կենտրոնում քննության կազմակերպման համար անհրաժեշտ պարագաներ (բացի թեստերից):

23. Քննասենյակներում քննության ընթացքը կազմակերպելու համար քննական կենտրոնի ղեկավարը նշանակում է քննության ընթացքի կազմակերպիչներ, ովքեր չեն կարող լինել տվյալ քննական առարկայի մասնագետներ:

24. Մինչև 30 սովորող ունեցող քննասենյակում աշխատանքները համակարգում է 2 կազմակերպիչ: 30-ից ավելի սովորող ունեցող քննասենյակում առաջին 30 սովորողների համար՝ 2 կազմակերպիչ, մեկական կազմակերպիչ՝ յուրաքանչյուր հաջորդ 30-ի համար, և մեկ կազմակերպիչ՝ վերջին 20 և ավելի սովորողների համար:

25. Քննական կենտրոնի ղեկավարը քննասենյակի կազմակերպիչներին մեկին նշանակում է պատասխանատու կազմակերպիչ, որը համակարգում է քննասենյակի կազմակերպիչների աշխատանքը:

26. Քննական կենտրոնի ղեկավարը կամ օգնականը, քննությունը սկսվելուց մեկ ժամ առաջ, կատարում է կազմակերպիչների գրանցում և վիճակահանությամբ բաշխում կազմակերպիչներին՝ ըստ քննասենյակների (խմբերի):

27. Սովորողների մուտքը քննասենյակ սկսվում է քննական կենտրոնի ղեկավարի հրահանգով:

28. Սովորողը մտնում է վիճակահանության սեղանին և վիճակահանության թերթիկի միջոցով որոշում իր նստարանի համարը: Կազմակերպիչը սովորողների տվյալ խմբի ցուցակում գրում է սովորողի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, վիճակահանված նստարանի համարը: Սովորողը ցուցակում

ստորագրում է իր տվյալների տողում՝ «նստարանի համարը» սյունակում:

29. Քննասենյակում կայացած վիճակահանության արդյունքի համապատասխան՝ երկրորդ կազմակերպիչն օգնում է սովորողին՝ գտնելու իր տեղը և չի թույլատրում տեղափոխություններ կատարել:

30. Քննությունը սկսվելուց առնվազն երկու ժամ առաջ քննական կենտրոնի ղեկավարը ԳԹԿ ներկայացուցչից ստանում է քննական թեստերի փաթեթները:

31. Քննությունը սկսվելուց առնվազն մեկ ժամ առաջ քննական կենտրոնի ղեկավարը քննասենյակի պատասխանատուին տալիս է յուրաքանչյուր խմբի համար նախատեսված փաստաթղթերի փաթեթը՝ բացի թեստերից:

32. Ավարտական քննություններին սովորողներին չի թույլատրվում քննասենյակ բերել բջջային հեռախոսներ կամ կապի այլ միջոցներ, տետրեր, դասագրքեր, ուսումնական և այլ ուղեցույց-ձեռնարկներ:

33. Սահմանված ժամկետում գրավոր աշխատանքը չավարտած սովորողներն այն հանձնում են անավարտ վիճակում:

34. Սովորողի՝ քննասենյակում տեղավորվելուց հետո, քննական կենտրոնի ղեկավարը կամ օգնականը քննասենյակ է բերում քննական թեստերի ծրարները: Քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը ծրարները ցուցադրում է սովորողներին և ներկա այլ անձանց (ծնողներ, հավատարմագրված դիտորդներ)՝ նրանց ուշադրությունը հրավիրելով ծրարների փակ և ամբողջական լինելու հանգամանքի վրա: Ծրար(ներ)ը բացելու համար պատասխանատու հրավիրում է առաջին նստարան(ներ)ին նստած սովորողներից մեկին: Առաջին շարքում սովորողների բացակայության դեպքում՝ հրավիրվում է սովորող այլ շարքից: Ծրարները բացելու մասին նշվում է արձանագրության մեջ:

35. Քննասենյակի պատասխանատուն (կազմակերպիչը) սովորողներին տեղեկացնում է քննասենյակում վարքի կանոնների պահպանման, ինչպես նաև բողոքարկման տեսակների մասին: Քննասենյակում քննության անցկացման կարգը ընթերցելուց և սովորողներին ցուցումներ տալուց հետո կազմակերպիչները բաժանում են թեստերը: Սովորողը, թեստը ստանալուց պես, թեստի շապիկի համապատասխան մասում գրում է քննասենյակի և իր նստարանի համարը: Թեստերի վերջնական բաշխումից հետո պատասխանատու կազմակերպիչը հայտարարում է քննության սկիզբը, տևողությունը և գրատախտակի մշում է քննության սկիզբը և ավարտը:

36. Քննասենյակից սովորողը կարող է դուրս գալ միայն խիստ անհրաժեշտության դեպքում՝ քննասենյակի պատասխանատուի թույլտվությամբ և միջանցքի հերթապահի ուղեկցությամբ:

37. Խմբի կազմակերպիչը ավելորդ (չօգտագործված, խոտանված) քննական նյութերը հաշվարկում, արձանագրում է, իսկ քննության ավարտից հետո փաթեթավորում և հանձնում է քննասենյակի պատասխանատու կազմակերպիչին:

38. Թեստի բովանդակության վերաբերյալ սովորողի հարցերը չեն քննարկվում:

39. Քննության ընթացքում ի հայտ եկած տպագրական կամ այլ թերություններ ունեցող թեստերը փոխարինվում են նորով:

40. Քննության ընթացքում սովորողների կողմից առաջադրանքների կատարման ժամանակ քննասենյակներում, բացի կենտրոնի ղեկավարից և կազմակերպիչներից, կարող են ներկա գտնվել Նախարարության, շրջվարչակազմերի, Ստեփանակերտի քաղաքապետարանի և ԳԹԿ-ի ներկայացուցիչները:

41. Քննության ավարտից 30 րոպե առաջ քննասենյակի պատասխանատուն սովորողների ուշադրությունը հրավիրում է ժամանակի վրա և հիշեցնում առաջադրանքների պատասխանները համապատասխան ձևաթղթերի վրա անցկացնելու մասին:

42. Սովորողի կողմից սույն ընթացակարգի պահանջները խախտելու կամ դրանց չենթարկվելու դեպքում քննասենյակի պատասխանատուին իրավունք է վերապահվում մեկ անգամ նախագուշացված սովորողին, քննական կենտրոնի ղեկավարի հետ համաձայնեցնելով, հեռացնել քննասենյակից:

43. Հեռացվող սովորողից վերցվում են քննական նյութերը, պատասխանների ձևաթղթի էջի վրա գրվում է՝ «Հեռացված է քննությունից»: Քննասենյակի և խմբի արձանագրությունների մեջ գրանցվում է այդ փաստը, հեռացվող սովորողի համարը, հեռացման պատճառը:

44. Քննության օրը չներկայացած սովորողը քննություն է հանձնում:

1. Հիմնական դպրոցի (մինչև 19 տարեկան) սովորողը՝ օգոստոսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում:

2. Միջնակարգ դպրոցի (մինչև 19 տարեկան) սովորողը՝ հուլիսի 2-8-ը և (կամ) օգոստոսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում:

45. Քննության համար նախատեսված ժամանակի ավարտին սովորողը հանձնում է իր թեստը և ստորագրում իր անվան դիմաց: Եթե սովորողն ավարտել է աշխատանքը սահմանված ժամանակից շուտ, ապա նա կարող է այն հանձնել և, ստորագրելով իր անվան դիմաց, դուրս գալ քննասենյակից: Քննության համար հատկացված ժամանակի ավարտին կազմակերպիչները սեղաններից հավաքում են քննական թեստերը:

46. Պատասխանատուն թեստերը քննության արձանագրության հետ հանձնում է քննական կենտրոնի ղեկավարին: Քննական կենտրոնի ղեկավարը, ներկայացված թեստերը վերահաշվարկելով, լրացնում է քննական կենտրոնում անցկացված քննության վերջնական արձանագրությունը, որտեղ նշվում է քննության մասնակիցների, բացակաների, քննությունից հեռացվածների, որևէ պատճառով քննություն ընդհատածների թիվը (առկայության դեպքում):

47. Քննության ավարտից հետո սովորողների ցուցակները պահվում են քննական կենտրոնի ղեկավարի մոտ՝ մեկ տարի:

48. Քննական աշխատանքները, բացի 9-րդ դասարանի «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաներից, ստուգվում են քննական կենտրոնի ղեկավարի հրամանով ստեղծված ստուգող հանձնաժողովի կողմից, քննության օրը՝ ժամը 14:00-ին, ԳԹԿ համակարգչային կայքում տեղադրված թեստերի ճիշտ պատասխանների հիման վրա: Ստուգող հանձնաժողովի նախագահն ի պաշտոնե Հաստատության տնօրենն է: 9-րդ դասարանի «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» քննական աշխատանքները ստուգվում են ԳԹԿ-ում:

49. 9-րդ դասարանում ստուգող հանձնաժողովի անդամների 50%-ը տվյալ առարկայի մասնագետներ են:

50. 12-րդ դասարանում ստուգող հանձնաժողովի անդամները չեն կարող լինել տվյալ առարկայի մասնագետներ:

51. Քննական արդյունքները գնահատելիս, քննական հանձնաժողովի անդամների միջև տարաձայնություն առաջանալու դեպքում հարցը լուծվում է հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ:

Հավասար ձայների դեպքում վճռորոշ է՝ 1. 4-րդ դասարանում՝ դասավանդող ու-

սուցչի առաջարկած գնահատականը,

2. 12-րդ դասարանի ռուսերենով ուսուցմամբ դասարաններում՝ «Ռուս գրականություն» առարկայի քննական հանձնաժողովի նախագահի առաջարկած գնահատականը:

3. Նշանակված գնահատականի հետ համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամ(ներ)ը արձանագրության մեջ կարող է (են) կատարել հատուկ նշում:

52. Գրավոր աշխատանքները գնահատելիս սևագրությունը չի գնահատվում:

53. Քննական աշխատանքների, բացի 9-րդ դասարանի «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաներից, արդյունքները հրապարակվում են տվյալ քննության հաջորդ օրը՝ ժամը 14:00-ին: Քննական կենտրոնի ղեկավարը ցուցակների կրկնօրինակը փակցնում է քննական կենտրոնի մուտքի մոտ: 9-րդ դասարանի «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաների քննական աշխատանքների արդյունքները հրապարակվում են ԳԹԿ-ի կողմից՝ քննության անցկացումից հետո 5 օրվա ընթացքում:

54. Քննական կենտրոնում քննությունների արդյունքների ցուցակներն առանձնացվում են ըստ դասարանների, ցուցակները վավերացվում են ստուգող հանձնաժողովի նախագահի կողմից:

55. Արդյունքների հրապարակումից հետո քննական կենտրոնի ղեկավարը էլեկտրոնային տվյալները, ինչպես նաև սույն կարգի 56-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված թեստերի բովանդակությանը վերաբերող սովորողի կամ նրա ծնողի (օրինական ներկայացուցչի) կողմից ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ արձանագրությունները համապատասխան լիազոր մարմնի կրթության վարչության միջոցով ուղարկում է ԳԹԿ:

56. Բողոքը կարող է լինել՝

1. քննության անցկացման կարգի խախտման մասին.

2. քննության արդյունքների հետ անհամաձայնության մասին.

3. թեստերի բովանդակության մասին:

57. Սույն կարգի 56-րդ կետի 1-ին ենթակետում նշված դեպքում սովորողը կարող է բողոքարկել քննության պահին կամ ավարտից հետո՝ մինչև քննասենյակից դուրս գալով՝ բողոքը ներկայացնելով քննասենյակի պատասխանատուին, ով փոխանցում է այն կենտրոնի ղեկավարին: Կենտրոնի ղեկավարը մեկ ժամվա ընթացքում քննարկում և պատասխանում է բողոքը ներկայացնողին:

58. Սույն կարգի 56-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքում բողոքները ներկայացվում են ստուգող հանձնաժողովի նախագահին՝ քննության արդյունքները հրապարակվելուց հետո 24 ժամվա ընթացքում:

Բողոքի քննարկման արդյունքները, ոչ ուշ քան դիմումը ընդունելուց հետո 24 ժամվա ընթացքում, գրավոր ներկայացվում է դիմողին:

59. Դիմումի քննարկումից հետո կարող է որոշում ընդունվել քննության գնահատականի պահպանման կամ բարձրացման, ինչպես նաև իջեցման մասին, որը հրապարակվում է և ուղարկվում ԳԹԿ:

60. Բողոքարկման արդյունքների հետ անհամաձայնության դեպքում դիմումի հեղինակը կարող է բողոքարկել վերադասության կարգով Նախարարություն և (կամ) դատարան:

ՈՒՍՈՒՑՈՒՄ

ՓՈՔԸ ԳՅՈՒՂԻ ՄԵՑ ԿԵՐՈՄՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԸ

Շարունակվում են հայրենասիրական և ճանաչողական դասերը դպրոցներում մասնավորապես ժամանակաշրջանում, երբ աշխարհով մեկ նշվում է Տեղասպանության 100-րդ տարելիցը: Դասեր, որոնք հազեցած են հայ ժողովրդի ողբերգական ու հերոսական էջերին վերաբերող նյութերով, և որոնք մեծ խթան են սովորողների ազգային ինքնագիտակցության, նրանց արժեհամակարգի ձևավորման գործընթացում:

Մեթոդիկների շրջանակներում այդ ընթացիկում դասերը կազմակերպվեցին Նախիջևանի միջնակարգ դպրոցում՝ հայոց պատմությունից և նախնական գիմնոզիական պատրաստությունից: Առարկաներ, որոնք այսօր առավել քան երբևէ մեր ժողովրդի համար առաջնային են տարբեր տեսանկյուններից:

Այսօրվա սերունդը պետք է առավելագույնս իմանա ու ճանաչի իր պատմությունը, ֆիզիկապես կոփված ու պատրաստ լինի՝ պաշտպանելու իր հայրենիքի սահմանները, թույլ չտա անցյալի սխալները, կարողանա շարունակել պայքարի հերոսական պայքարը, որպեսզի սերունդների առաջ հպարտ ճակատով լինի կանգնած:

Երկու դասերն էլ կազմակերպված էին սկսնակ ուսուցիչների մոտ:

Առաջին դասը հայոց պատմությունից վարեց երիտասարդ ուսուցիչ Արեն Սարգսյանը՝ «Մայիսյան հերոսամարտերը» թեմայով: Խմբային աշխատանք հանձնարարեց «Սարգսյան պատ», «Բաշ-Ապարան» և «Ղարաբաղի» թիմերին: Աշխատում էին բոլորը: Խմբի ավագը ներկայացնում էր նյութը, անդամները՝ գրատախտակին գրում նշանավոր տարեթվերն ու աչքի ընկած գործիչների անունները: Կարելի էր միայն տեսնել աշակերտների աչքերի փայլն այն պահին, երբ նրանցից մեկն անսպասելիորեն պատմում էր, որ Դահիշ Բեկ-Փիրումյանն ու Պողոս Բեկ-Փիրումյանն իրենց համագյուղացիներն են:

Մայիսյան հերոսամարտերով ուսուցիչն իր առջև մի կարևոր նպատակ էր դրել՝ սովորողներին ուսուցանել, որ հայերն այն ժամանակ ոչ թե պասիվ գոյեր էին թուրքական յաթաղանի առաջ, այլ հերոսական մարտեր մղող աննկուն զինվորներ: Դասն առավել ամբողջական դարձրեց իր անձնական գրադարանից բերած այն զեղարվեստական ու փաստավավերագրական զրքերով, որոնց հեղինակները հիմնականում օտարազգի են, և որպես հարգանքի տուրք այդ հեղինակներին՝ հանձնարարեց գրել ռեֆերատներ՝ սիրած հերոսի ու սիրած հերոսամարտի մասին:

Նրա դասը վերլուծող մասնագետները գնահատեցին ուսուցչի կողմից օգտագործվող հնարներն ու մեթոդները, դիտողական պարագաները, լրացուցիչ գրականությունը, պատմության անցյալի և ներկայի միջև հմտորեն կապ ստեղծելու կարողությունը, հասարակական գիտելիքի և հարցերի լայն շրջանակներում հարցերի և պատասխանների փոփոխական ընթացքը:

Երի հանդեպ ոչ խղճահարություն առաջացնող ոգու և հպարտության ընդգծված շեշտը: Ուսուցչի այսօրվա գիտելիքները ձեռք են բերվել դեռևս աշակերտական նստարանից, ու այսօր դպրոցների անհրաժեշտ են խելքը, գիտելիքների հարուստ պաշարով նման ուսուցիչներ:

Չենց այս հանգամանքը նկատի ունեցավ Ասկերանի կրթության բաժնի ավագ մասնագետ Սվետլանա Արսյանը, որը, խրախուսելով երիտասարդ ուսուցիչ Արեն Սարգսյանին աշխատանքը, խորհուրդ տվեց բոլոր երիտասարդներին՝ լավ տիրապետել իրենց առարկային:



8-րդ դասարանի 12-հոգանոց դասարանից հետո երբ մտանք 11-րդ դասարան, որի միջանցքում զինղեկին ողջունելու համար կանգնած էին ընդամենը 3 աշակերտ (2 աղջիկ, 1 տղա), մի բուք ցավ նվկաց մեր հոգում (Արցախյան պատերազմի հետևանքը սա էր): Սակայն քանակը չէր կարող վճռորոշ դեր կատարել և ազդել դասի հաջողության վրա:

Սկսնակ զինղեկ Գեղամ Սահակյանը ներկայանալով տարավ իր հետևից պատմության մայրիվերո ճանփաներով՝ սկսած Զայկից մինչև մեր օրերը՝ կարևորելով 3 հանգամանք:

Առաջին՝ հայը միշտ էլ ապավինել է գեներալին, որը նրա համար պաշտամունքի առարկա էր:

Երկրորդ՝ հայի համար լինելիության երաշխիքը եղել է իր հավատը, կրոնը՝ քրիստոնեությունը, որի համար պատրաստ էր նահատակության: Պատմական ամենավառ ապացույցը՝ Ավարայրի ճակատամարտը: Երրորդ՝ 1915-ին հայ ժողովուրդը սրի քաշվեց, որովհետև զինաթափ էր...

Այսպես դանդաղ, համոզիչ փաստերով եկավ հասավ դասին, որ վերաբերում էր հրաձգային գեներալ փանիշտների տեսակներին: Սովորողները տարբերում են փանիշտներն ու նրանց կիրառության պայմանները, գիտեին գեներալի հետ վարվելու անվտանգության կանոնները, որոնք խստիվ չպահպանելու դեպքում կհանգեցնի աղետալի հետևանքների: Ցուցադրեցին

ինքնաձիգից օգտվելու երեք դիրքերը՝ պտկած, ծնկած և կանգնած՝ բացատրելով յուրաքանչյուրի առանձնահատկությունները ու նաև զինչերային մարտերի ժամանակ օգտագործվող լուսածրային գնդակների նպատակը: «Կրակային պատրաստություն» թեմայի վերաբերյալ աշակերտների գիտելիքները բավարար էին: Այնուհետև զինղեկն ընդգծեց այն հանգամանքը, որ Արցախի բոլոր դպրոցներում ուսումնասիրվող ՆՁՊ առարկան այժմ լայն հնարավորություններ ունի գործնականում կիրառելու համար, քանի որ բանակ-դպրոց փոխայցելությունները փոխառնակաբար լինելուց զատ նաև հնարավորություն են տալիս տարվա մեջ մի քանի անգամ լինելու զորամասերի հրաձգարաններում և ամրապնդելու կրակային պատրաստությունը:

Այսօր Արցախի գերիսնդիցը մնում են սահմանների անառիկությունը և ժողովրդի անվտանգությունը:

Ուրեմն՝ սովորողների գիտելիքները ռազմագիտությունից միշտ պետք է բարձր ու համոզիչ լինեն:

Ծավալված քննարկման ժամանակ փորձառու զինղեկները, գնահատելով երիտասարդ ուսուցչի ջանքերը, խորհուրդներ տվին նրան, հորդորեցին շատ դասեր լսել ավագ զինղեկների մոտ, փորձ ձեռք բերել այն կարևոր առաքելության ճանապարհին, որին կոչված է: Եվ զինղեկն ունի այդ բոլոր տվյալները:

Օրվա զեղեցիկ եզրափակումն իրողություն դարձավ դպրոցի արտադասարանական աշխատանքների գծով կազմակերպիչ, աշխարհագրության շնորհալի ուսուցչուհի Նոյեմ Զակարյանյանի ջանքերով, որի արդյունքում ծնվեց գրական-երաժշտական մի հրաշալի միջոցառում՝ խոր հայրենասիրությամբ, խորհատությամբ, ազգային նվիրական ձգտումներով ու զեղագիտական բարձր ճաշակով շնչող:

Աշակերտների հուզիչ ասմունքը, ազգային պարերի ու երգերի զեղեցիկ կատարումները դափնի ճանաչումն ուստածներին տարան մեր պատմության երանելի խորքերը, ավերումների դաժան ճամփաներով հասցրին լուսավոր ցանկալի ապագային՝ պարտադրելով դափնի ճանաչումն ու հոտնկայս երկարատև ծափահարել:

Այո՛, փոքր գյուղն ունի մեծ հերոսներ, բայց չմոռանաք նաև, որ մեծ հոգեք էլ ունի:

Դպրոցում, համայնքում դեռևս առկա չեն այն բարենպաստ պայմանները, որ նախկին համագյուղացիները (նրանք դեռևս սիրված են տարբեր բնակավայրերում) վերադառնան ու շենքանեն իրենց երբեմնի հռչակավոր գյուղը և դարձնեն մեծ հերոսներին արժանի բնակատեղի: Բայց հուսադրող մի կարևոր հանգամանք կար դպրոցում. 22 անկախավարժերից 7-ը տղամարդիկ են:

ՀԱՂԹԱՆԱԿԸ ՆԱԵՎ ԵՐԵՄԱՆԵՐՆ ԵՆ ԲԵՐՈՒՄ



Չայրենիքի նկատմամբ սերը, հայրենյաց պաշտպան լինելու վեհ գաղափարը մատաղ սերնդի մեջ արմատավորվում է վաղ հասակից: Արցախում արդեն սովորական երևույթ է փոքրիկ տղաներին, անգամ՝ աղջիկներին տեսնել զինվորիկների հագուստով: Դա, հիարել, ձև է, որն անփոփոխ է իր մեջ խոր բովանդակություն: Դրանում համոզվելու համար բավական է մտնել ցանկացած հանրակրթական դպրոց կամ նույնիսկ ավելի ցածր օղակ՝ նախադպրոցական հիմնարկ, և կհամոզվեք: Իսկ եթե ժամանակն էլ տոնական շնչով է տոգորված, հատկապես՝ Մայիսյան եռատոնի, կարելի է պատկերացնել այդ օրերի պաթոսը: Եռատոնը դարձել է յուրատեսակ անփոփոխ հայ ժողովրդի մայիսյան հաղթանակների, արիության դաս և ինչու չէ՞ քննություն, թե սերունդների փոխանցումներում ինչքանով է պատրաստական նոր սերունդն ընդունելու հայրենի սիրելու, պաշտպանելու էստաֆետը:

Ստեփանակերտի հ. 2 մանկապարտեզի (տնօրեն՝ Նինա Լազարյան) միջին խմբերից մեկում Մայիսյան եռատոնին նվիրված ցերեկույթը մեկն էր Արցախի բազմաթիվ մանկապարտեզներից:



կան հիմնարկներում կազմակերպվող այդօրինակ միջոցառումներից: Ընդարձակ դասի ժողովուրդն հարիր գույների մեջ, ավելի մեծ լիցք ստացավ չորս տասնյակի հասնող փոքրիկների մուտքով: Առանց մեծերի նախաբանի՝ մեկը մյուսին հաջորդելով՝ ներկայացրին իրենց իմացածը եռատոնի մասին: Գիտեն ամենամեծ պատերի Չայրենյան պատերազմում տարած հաղթանակի մասին, որի 70-ամյակն է լրացել: Գիտեն, որ Մայիսի 9-ը Արցախի պաշտպանության բանակի ստեղծման և հայոց հնամյա ուստան Շուշիի ազատագրման օրն է: Այդ մասին պատմում են իրենց թոքով լեզվով, տեղ-տեղ շտապելուց բառերը կոկ տալով, բայց՝ անկաշկանդ, ուրախ, յուրաքանչյուրն իր ասածի կարևորության գիտակցումով: Խոսքին հաջորդում է երգը, երգին՝ պարը, նորից՝ խոսքը... Նրանց հյուրերը, որոնց մեջ էին ԼՂՀ կրթության և գիտության փոխնախարար Սիբայել Զամբարձումյանը, նախարարության արտադպրոցական և նախադպրոցական բաժնի պետ Աննա Այվազյանը, բաժնի գլխավոր մասնագետ Էմիլիա Զովհաննիսյանը, քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնից Անահիտ Մեսրոպյանը, ՊԲ ներկայացուցիչներ Նվարդ Խաչատրյանը, Ինգա Ջաբարյանը, ծնողներ, մանկապարտեզի տնօրինությունը, խանդավառանքով էին հետևում երկրի փոքրիկ տեղերի ելույթներին: Չիրավի, մեծ աշխատանք է տարվել երեխաների հետ: Անշուշտ, դրանում մեծ է խմբի դաստիարակչուհի Ռոմելա Իսախանյանի դերը, որի ձեռքի աշխատանքներին դաստիարակչուհիների համարապետական մրցություն ակամատես են եղել շատերը, որտեղ երկու տարի անընդմեջ նա առաջին տեղն է գրավել, իսկ այժմ հնարավորություն ունեն գնահատելու երեխաների հետ նրա աշխատանքը: Իր փոքրիկների համար նա ուսուցիչ է, մայր, իսկ այդ պահին՝ նաև հրամանատար, որի մասին էր ասում նրա զինվորական համագետը:

Ի՞նչ ասել է հաղթանակ, երեխաները փորձում էին տարբեր կողմերից այն ներկայացնել:

«Հաղթանակը ուրիշ տեղ մի փնտրեք, հաղթանակը մեր երեխաներն են, նրանց թոքով խոսք բառերից մեր այսքան հաճույք ստանալը...»-ասաց փոխնախարարը՝ շնորհակալություն հայտնելով դաստիարակչուհուն, տնօրինությանը, մանկապարտեզի ողջ կոլեկտիվին՝ երեխաների հետ նման աշխատանք տանելու համար և շնորհավորելով բոլորին՝ եռատոնի կապակցությամբ: Նշենք, որ հյուրերը ակամատես եղան մեկ խմբի ելույթին, բայց մանկապարտեզի բոլոր խմբերն են ցերեկույթ պատրաստել: Ասել է թե՛ երեխաների աշխարհում միշտ տոնն է:

Ստեփանակերտի մանկապարտեզի տնօրեն Նինա Լազարյան

Ստեփանակերտի մանկապարտեզի տնօրեն Նինա Լազարյան

Ստեփանակերտի մանկապարտեզի տնօրեն Նինա Լազարյան

Ստեփանակերտի մանկապարտեզի տնօրեն Նինա Լազարյան

Ստեփանակերտի մանկապարտեզի տնօրեն Նինա Լազարյան

Ստեփանակերտի մանկապարտեզի տնօրեն Նինա Լազարյան

Ստեփանակերտի մանկապարտեզի տնօրեն Նինա Լազարյան

Ստեփանակերտի մանկապարտեզի տնօրեն Նինա Լազարյան

Ստեփանակերտի մանկապարտեզի տնօրեն Նինա Լազարյան

ԱՄՍՈՒՆԵՐԻ ԵՎ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՐԳԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՁՈՒՅՑ

Սատաղ սերնդի հայեցի դաստիարակությունը բոլոր ժամանակների պահանջված ու հրատապ խնդիրն է: Նոր սերունդը պիտի կարողանա ընկալել ու գնահատել իր ազգի մեծերին, նրանց բառ ու բանը, ոգևորվի հայրենաշունչ ու հայրենակոչ երգերով, ըմբռնի դրանց հիմնական իմաստն ու առաքելությունը:

Տեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակում կազմակերպվեց Ասմունքի և հայրենասիրական երգի հանրապետական մրցույթը մայրաքաղաքի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնում:

ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կազմակերպիչներն ամեն ինչ արել էին՝ միջոցառումը պատշաճ կազմակերպելու համար:

Ասմունքի համար մասնակիցներն ընտրել էին հայոց մեծերի՝ Զովհ. Շիրազի, Պ.Սևակի, Ս. Կապուտիկյանի, Զովհ. Թումանյանի, Գ.Վարուժանի, Զ.Սահյանի, Գ. Էմինի՝ հայոց մեծ Վշտից՝ Եղեռնից, ծնված ստեղծագործությունները:

Դահլիճի պատերից, առաստաղից ծորում էր այդ մեծ Վիշտը... ծորում էր, սակայն, ոչ հուսահատ ու հուսալքված, այլ՝ հուսավառ ու զինավառ, ճիշտ և ճիշտ մեր ժողովրդի ոգուն համահունչ ու հոգեհարազատ:

Լավ կան չեն այդ երգերը, այլ՝ խրոխտ ու ըմբոստ, ինչպես հայոց լեռները:

Դահլիճին հմայեցին նաև հայրենասիրական երգով հանդես եկող մասնակիցները՝ խմբային թե անհատ: Մեր երգադարանը հարուստ է այնպիսի երգերով, որոնք, չնայած ժամանակին ու տարածությանը, երբեք չեն կորցնում իրենց այժմեականությունը:

Չանձնախմբի անդամները (Նախագահ՝ Ռայա Մուսայեյան, ան-

դամներ՝ Նաիրուհի Ալավերդյան, Սիրուն Բաղդասարյան, Լեռնիկ Զարթուրյան, Աննա Այվազյան, Էմիլիա Զովհաննիսյան), ուշադիր լսելով բոլոր ելույթները, ամփոփեցին արդյունքները:

Ասմունքից մրցանակային տեղեր գրավեցին և նախարարության դիպլոմով ու դրամական միջոցներով պարգևատրվեցին. Էդմոն Սարգսյան (I տեղ), Աննա Մայիլյան (II տեղ), Դավիթ Զարթուրյան (III տեղ):

Չայրենասիրական երգի մրցույթում հաղթեցին և պարգևատրվեցին Առաքել Զայրապետյան (I տեղ), Անի Բաղդասարյան (II տեղ), Լուրա Ավետիսյան (III տեղ):

Նախարարության պատվոգրերով պարգևատրվեցին Արման Գրիգորյանը և մայրաքաղաքի I, X և XI դպրոցների երգչախմբերը:

Եղան նաև խրախուսական նվերներ, որոնցով պարգևատրվեցին Անուշ Առստամյանը, Ռաիսա Մելքունյանը, Զարան Բաբայանը, Լինա Սիրոյանը, Արսեն Զարոյանը և Ռուզաննա Առաքելյանը:

Չանձնախմբում, նկատի առնելով որոշ մասնակիցների ծայնային տվյալները, տարբեր անվանակարգերում (խրոխտ, հուզիչ, լավագույն, հաճելի) պարգևատրեց Յուրա Մարգարյանին, Գեորգի Իսրայելյանին, Էլինա Մանգասարյանին և Աննա Բաբայանին՝ ակտիվ մասնակցության համար:

Ամփոփելով միջոցառումը՝ Լեռնիկ Զարթուրյանը խորհուրդներ ուղղեց մասնակից աշակերտներին և նրանց ուսուցիչներին, շնորհակալություն հայտնեց ԿԳ նախարարությանը՝ նման ձեռնարկի համար, և պատգամեց՝ ավանդույթ դարձնել այդպիսի միջոցառումները:

Սուրբայա ՂԱԶԱՐՅԱՆ

Սեփ. լրատվություն

ՓՈՐՁԱԿԱՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅԱՅԻՆ ՈՒՍՈՒՅՈՒՄԸ ՆԵՐԱՌԱՎԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԳՐԱՎԱԿԱՆՆ Է

Աշխարհը փոխվում է արագընթաց տեմպերով և անկանխատեսելիորեն:

Տեղեկատվությունն ու գիտելիքները ձևավորում են մեր աշխարհայացքը: Հասարակական կյանքի անբաժանելի մաս հանդիսացող կրթության արդի մանկավարժական որոնումները նպատակ ունեն ուսուցման գործընթացը դարձնել այնպիսին, որ սովորողները դառնան այդ գործընթացի ակտիվ մասնակիցներ: Այդ պատճառով կրթության ոլորտի աշխատողները ամենուրեք գիտակցում են, որ դասավանդման հինգսուներորդ աստիճանը են արդեն այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումներ:

Այս նպատակով փորձարկվող միջոցներից մեկն է համագործակցային ուսուցումը: Այն կրթության ոլորտում առավել տարածված և խնդիրների լուծման նպատակով ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է: Չնայած իր տարածմանը ուսուցիչների շրջանում և երկարատև պատմությանը՝ այն չի գտել լայն կիրառում: Դրա պատճառն ամենևին սովորողների առաջընթացի և ընդհանուր զարգացման վրա համագործակցային ուսուցման դրական ազդեցության վկայությունների բացակայությունը չէ: Իրականում համագործակցային ուսուցումը ժամանակակից կրթության, դասավանդման և ուսուցման ամենաշատ ուսումնասիրված ոլորտներից է: Կարճ ասած՝ անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ուսուցման վերաբերող հետազոտությունների արձագանքները բավական խոստումնալից են:

Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու անհրաժեշտ վարպետություն: Հենց այդ պատճառով համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում, և դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքները ավելի շատ խմբային աշխատանքներ են՝ քան համագործակցային ուսուցում: Համագործակցային ուսուցման կիրառումը ժամանակատար գործընթաց է: Մեկ աշխատանքային հանդիպումը կամ սեմինարը դեռևս բավարար չեն: Ուսուցիչներից պահանջվում է մեկ կամ երկամյա մասնագիտական վերապատրաստում և ուսուցում: Այդ ժամանակահատվածում չափազանց կարևոր է դասարանում պարբերաբար կիրառել ուսուցման հմտությունները, ուսումնասիրել համագործակցային ուսուցման վերաբերյալ գրականություն, ինչպես նաև համագործակցել նմանատիպ գործընթացներում ներգրավված ուսուցիչների հետ:

Համագործակցային ուսուցումը դեռևս հայտնի է վաղ ժամանակաշրջանից: Երրորդ դարում, օրինակ՝ Թալմուդը հասկանալու համար հարկավոր էր ընթերցողին մի այլ ընկեր: Համագործակցային ուսուցման մասին մշակվել են մի շարք տեսություններ: Ըստ Ջոնսոնների՝ տարբերակվում են համագործակցային ուսուցման երեք հիմնական տեսակներ. երկարաժամկետ տարատեսակ ուսուցման բազային, պաշտոնական և ոչ պաշտոնական խմբեր: Համագործակցային հենակետային խմբերը կայուն անդամներով երկարաժամկետ, տարատեսակ (հետերոգեն) խմբեր են, որոնց աշխատանքը տևում է ողջ դասընթացի կամ ծրագրի շրջանակներում: Այս խմբերի անդամները աջակցում, օգնում և խրախուսում են՝ նպատակով առաջադրանքի կատարմանը և գիտելիքների ձեռքբերմանը: Այն ներառում է բացակա ընկերներին աջակցելը, անցած նյութը բացատրելը, տնային հանձնարարությունները կատարելու հարցում օգնելը և այլն: Դրանք մշտական են (գործում են մեկից մի քանի տարի) և ապահովում են երկարաժամկետ, հոգատար, գործընկերային փոխհարաբերություններ: Խմբերը անց են կացնում պաշտոնական հանդիպումներ՝ յուրաքանչյուր անդամի ակադեմիական

առաջընթացը բնարկելու, միմյանց աջակցություն և օգնություն տրամադրելու համար, ինչպես նաև համոզվելու, որ յուրաքանչյուր անդամ կատարում է հանձնարարություններ և ունի բավարար առաջընթաց ակադեմիական ծրագրի շրջանակներում: Ոչ պաշտոնական անդամները համագործակցում են ամեն օր՝ դասերի ընթացքում և դասամիջոցներին, քննարկում են հաճախարարությունները և օգնում միմյանց՝ կատարելու տնային աշխատանքները: Հենակետային խմբերն ունեն անձնական պատասխանատվություն՝ լսել և սատարել խմբի անդամին, երբ վերջինս ունի անձնական բնույթի խնդիրներ: Որքան մեծ է դասարանը կամ դպրոցը, և բարդ ու դժվարին առարկան, այնքան ավելի կարևոր է հենակետային խմբեր ունենալը: Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ակտիվորեն ներգրավված է ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտների միջոցով:

Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակման միջոցով հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը: Համագործակցային ուսուցումը մեծացնում է նաև սովորողների ինքնուրույնությունը և պատասխանատվությունը:

Համագործակցային ուսուցման ժամանակ սովորողները, համագործակցելով փոքր խմբերով, ձևավորում են ընդհանուր հասկացություններ:

Համագործակցային ուսուցման կարևորությունը, իմ կարծիքով, առավել կարևոր է ներառական կրթության իրականացման համար: Ինչպես մեզ հայտնի է, ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականությունը երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ առանձնահատուկ կրթական կարիքներ ունեցող անձանց համար:

Ներառական համակարգը կրթությունը մատչելի է դարձնում բոլորի համար, այն ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման՝ բավարարելու մարդկանց զանազան կրթական պահանջները: Եթե ներառական կրթության մտցրած փոփոխությունները ուսուցումն ավելի արդյունավետ դարձնեն, ապա կշահեն բոլոր երեխաները, այլ ոչ միայն առանձնահատուկ կրթության կարիք ունեցողները:

Ներառական կրթության զարգացման օժանդակում են ուսուցիչները, ծնողները, առհասարակ բոլոր նրանք, ում միջամտությունը կարող է այս կամ այն կերպ օգտակար լինել: Ներառական կրթությունն օգնում է կանխել խտրականությունը երեխաների նկատմամբ՝ սատարելով նրանց բոլորին, ինչպես հատուկ կարիքներ ունեցողներին, այնպես էլ չունեցողներին, իրենց՝ հասարակության լիիրավ անդամ լինելու գործում:

Կան բազմաթիվ կրթօջախներ, որոնք աշխատում են ի շահ հատուկ կարիքներ ունեցող երեխաների և լավ են կատարում իրենց աշխատանքը: Եթե ներառական կրթության մեթոդաբանությունը մշակված է ողջ կրթական համակարգի համար, ապա ամեն մի երեխա կգտնի իր տեղն այդ համակարգում, և հնարավոր կլինի դպրոցում սովորելը համատեղ ընտանիքի գրկում ապրելու հետ: Դպրոցում երեխաներին միմյանցից առանձնացնելու օրինական հիմքեր չկան: Երեխաները պետք է սովորեն միասին. դա օգտակար կլինի բոլորի համար: Պետք է նրանց պաշտպանել միմյանցից: Բոլոր երեխաները պետք է կրթություն ստանան, որը կօգնի նրանց հարաբերություններ հաստատել և պատրաստվել կյանքին հասարակության մեջ: Ներառական կրթությունը արդյունավետ դարձնելու նպատակով անհրաժեշտ է ուսուցման ընթացքում կիրառել մանկավարժական մի շարք տեխնոլոգիաներ և մեթոդ-

ներ, որոնք դասընթացը կդարձնեն առավել հետաքրքիր, նպատակային և դասապրոցեսին մասնակից կդարձնեն դասարանի բոլոր երեխաներին՝ առանց որևէ խտրականության:

Մանկավարժական տեխնոլոգիաների, ինտերակտիվ մեթոդների նկարագրությունները նպատակ չունեն առաջարկելու ուսուցման կազմակերպման հստակ դեղատոմսեր, բայց կարող են նախաձեռն դասավանդման արդյունավետության ապահովման բնութագրիչները: Կրթական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե ուսուցումը որքանով է ուղղորդված դեպի սովորողները և հասարակությունը, ինչպես են մատուցվում, զմայտվում սովորողների գիտելիքները, նրանց կարողությունները և հմտությունները:

Ուսուցիչը մանկավարժական որևէ տեխնոլոգիա կամ մեթոդ ընտրելիս նախ և առաջ պետք է հաշվի առնի իր աշակերտների առանձնահատկությունները, հետաքրքրությունների շրջանակը, ունակությունների մակարդակը: Մանկավարժական տեխնոլոգիաները միտված են ոչ թե բարդացնել ուսուցման գործընթացը, այլ առավել դյուրին դարձնել այն: Ինչպես նաև ուսուցիչը այդ մեթոդներն ու տեխնոլոգիաները կիրառելիս պետք է հաշվի առնի, որ իր աշակերտների թվում կան այնպիսիները, որոնք ունեն այս կամ այն խնդիրներ, և պետք է այնպես հարմարեցնի այդ ամբողջը, որ բոլորին օգտակար լինի: Այդ տեխնոլոգիաներից ամենակարևորը ներառական կրթության համար համագործակցության մանկավարժական տեխնոլոգիան է:

Համագործակցային մանկավարժական տեխնոլոգիան իմաստավորում է համատեղ գործունեության և կոլեկտիվ հարողակցման հիման վրա կազմակերպված ուսուցում: Այդպիսի հարողակցման ձևեր կարող են լինել կազմակերպված երկխոսությունը՝ զուգորդված երկխոսությունը, աշակերտների զույգերով կամ ավելի մեծ խմբով կազմակերպված աշխատանքը:

Հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը՝ իմ սեփական մանկավարժական փորձով ուսումնասիրել եմ այդ գործընթացը՝ որպես մանկավարժ, որպես ծնող: Այն դպրոցը, որտեղ երկար տարիներ դասավանդում եմ, ունենք հատուկ պայմանների կարիք ունեցող երեխա, ում ուսուցումը մինչև չորրորդ դասարանը իրականացվել է առանձին, սակայն հինգերորդ դասարանից նա ընդգրկվել է ընդհանուր ուսուցման մեջ: Քանի որ ուսումնասիրողները ուսուցման աշխատանքի կատարում համագործակցային ուսուցման վերաբերյալ, ես ընտրեցի այն դասարանը, որտեղ սովորում էր այդ երեխան, որովհետև այդ դասարանը աշակերտների թվաքանակով ամենաշատն էր, և այնտեղ խմբային աշխատանքները ավելի հաջողված էին լինում: Մասնաձևային աշխատելով այդ դասարանի հետ՝ սկզբում հանդիպեցի դժվարությունների այդ երեխայի պատճառով, քանի որ երեխաները դեռ նրա հետ միասին սովորելուն չէին հարմարվել: Սակայն որպես մանկավարժ, որպես ծնող՝ ես չհուսահատվեցի և դասամիջոցներին, դրսում այդ երեխային պահում էի իմ ուշադրության կենտրոնում: Իմ աշխատանքը պարզորոշ չանցավ: Շարունակելով համագործակցությունը դասարանի ղեկավարի, հատուկ հաջողությունների: Համագործակցության արդյունքում այդ երեխան հիմա կարողացավ իրեն լիարժեք զգալ դասարանում, իմ դասաժամերին առաջին հերթին նրան են հանձնարարություններ տալիս և միշտ աշխատում են որևէ աշակերտի պարտավորեցնել, որ նրան օգնի: Եվ ես ամեն անգամ նրա մոտ դրական որևէ բան նկատելիս ուրախանում եմ, որովհետև կարծում եմ, որ հենց այդպիսի երեխաները ամենաշատը պետք է լինեն մեր ուշադրության կենտրոնում, որպեսզի նրանք էլ դառնան մեր հասարակության լիիրավ անդամ:

**Ժամնա ՄԱՍՈՒՆՅ**  
Կոնդոլորի միջնակարգ դպրոցի օտար լեզվի ուսուցչուհի

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆԷ



ԼԴԳ կրթության և գիտության նախարարությունը ջերմորեն շնորհավորում է պետական տեսուչ, երաժշտության գլխավոր մասնագետ Ռոզա Վերդյանին՝ ծննդյան 65-ամյակի առթիվ:

Տիկին Վերդյանն իր ամուսնացալի ավանդ ունի հանրապետության կրթարաններում երաժշտության դասավանդումը նոր հիմքերի վրա դնելու գործում:

Սիրած մասնագիտությունը ուղեկցել է նրան միշտ և ամենուր: Ջանք ու եռանդ չի խնայել, որ սովորողները սիրով յուրացնեն

երաժշտական գիտելիքները, երաժշտության միջոցով սիրեն հայրենիքը, բնությունը, շրջապատող աշխարհը:

Իր անհատունու եռանդով նա կարողանում է բարձրացնել գործընկերների տրամադրությունը, դրական լիցքեր հաղորդել ինչպես նրանց, այնպես էլ երեխաներին:

Վերստին շնորհավորելով հոբելյանի առթիվ՝ Ռ. Վերդյանին ցանկանում ենք քաջառողջություն, բարեկեցություն նրա զավակներին, թոռներին, նոր մտահղացումների իրականացում:

ԼԴԳ կրթության և գիտության նախարարության

ՓԱՌՎՈՐ ՌԻԴՎԱՐԻՆ ԱՆԽԱՏԱՆՔՈՎ



«Երեխաներին դաստիարակող ուսուցիչը հարգանքի է արժանի ավելի, քան ծնողը, ում երեխան պարտական է լոկ իր ծնունդով: Մեկը մեզ կյանք է պարգևում, մյուսը՝ արժանավոր կյանք»: Արիստոտելյան այս տողերը պատահական չեն ծնվել և արդիական են բոլոր ժամանակներում:

Իսկապես, ուսուցիչ լինելը մեծ կոչում է, առավել ևս, երբ ուսուցիչը ոչ միայն մատուցում է ճշմարտությունը, այլ իր սաներին սովորեցնում է զմայտելի այն:

Մխաված չեմ լինի, եթե այդ կոչմանը արժանի մարդկանցից առանձնացնեն իմ առաջին ուսուցչուհի Մարյանա Հայրապետյանի անունը, ով իր գիտակցական կյանքը ցմախել է մատաղ սերնդի դաստիարակության ու կրթության վեհ ու պատվավոր գործին:

Ծնվել է 1955թ. մայիսի 10-ին: 1962-1972թթ. սովորել և ավարտել է ծննդավայրի՝ Չափարի միջնակարգ դպրոցը: 1973-1979թթ. ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի «Տարրական կրթություն և մեթոդիկա» բաժինը, 1974 թվականից միասնական աշխատել է Չափարի միջնակարգ դպրոցում:

1988-92 և մինչև Արցախյան պատերազմի զինադադարը թիկունքում մասնակցել է կազմակերպված բոլոր հասարակական միջոցառումներին: 1992թ. աշխատել է Կոտայքի մարզի Ներքին Պոլիսի գյուղում: 1973 թվականից շարունակել է մանկավարժական աշխատանքը հայրենի գյուղում:

2004թ. տեղափոխվել է Շահումյանի շրջանի Դաղիվանք գյուղ և շարունակել աշխատանքը Դաղիվանքի Ա. Արմենակյանի անվան միջնակարգ դպրոցում՝ որպես տնօրեն: 2010-11 ուստարվածից աշխատում է դասավարձ մատաղ սերնդին դաստիարակող մուլտիմեդիա:

Փառավոր ու դժվարին իր աշխատանքով խելացի, խոհուն, բարի, միաժամանակ խստապահանջ ուսուցչուհին սիրվել ու հարգվել է բոլոր այն մանկավարժական կոլեկտիվներում, որտեղ աշխատել է: Նրա մանկավարժ աշխատող սաները երագում են նմանվել սիրելի ուսուցչուհուն: Ինքս էլ այն երջանիկներից եմ, ով աշակերտել է Մ. Հայրապետյանին և նաև բախտ ունեցել աշխատել նրա հետ: Այն մայրական քնքշանքը, այն նուրբ ու բարի ժպիտը, այն գորովանքը, որ զգացել եմ դեռ որպես աշակերտ, զգացել եմ նաև որպես գործընկեր: Իրոք, մի առանձին երջանկություն է միշտ կողքիդ ունենալ լավ ուսուցիչ:

Տիկին Հայրապետյանը իր սաներին և հատկապես ինձ համար անփոխարինելի մի էակ է: 21՝ որ մա է մեզ սովորեցրել մեսրոպյան տառերը, սովորեցրել է մեզ սանատել գեղեցիկը, բարին: Նա գերազանց յուրացրել է իր սաներին էլ սովորեցրել է սովորեցնում է մարդ լինելու արվեստը: Դպրոցը և կրթությունը նրա տարերքն են, նա ապրում է իր աշխատանքով, իր սաների հաջողություններով, որոնց անունից էլ ես ուզում եմ շնորհավորել բոլորի կողմից սիրված ուսուցչուհուն վաթսուամյակը՝ ցանկանալով նրան անխափան ու բեղուն աշխատանք, երկար տարիների երջանիկ կյանք:

Սիրելի ուսուցչուհի, եթե հնարավոր լիներ, մի հրովարտակ կարձակելի, որ Ձեր ճանապարհը միշտ կանաչ լինի, միշտ ծաղկունք վառվի, և Ձեզ համար գարունները գան ու զգնան:

Ինչպես ասում են՝ կնճիռները ձակատին անխուսափելի են, միայն թե դրանք չլինեն սրտին, թող ձեր հոգին երբեք չծերանա:

**ՄԵԼԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ**  
Շահումյանի շրջանի Նոր էրեքջի միջն. դպրոցի ուսուցչուհի

ԱՅՔ-ԲԵՆ...

ՀԱՅ ՄՆԱԼՈՒ ՈՒՂԻՆ

Թեպետ բախտը մեզ շատ է հարվածել, բայց ուր հասնում է հայի գիրքն ու գիրը, Կենդանի կմնա հայության ոգին...

Յ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Համաշխարհային տարաբնույթ խմորումների խառնարանում մի կողմից փորձում ենք ինտեգրվել համընթաց հոսանքներին, մյուս կողմից կղզիացնել այն ամեն ազգայինը, որ միայն մերն է դարերից ու հազարամյակներից ավանդված:

Հյուսիսային Կովկասում հայերը սկսել են ապրել 15-րդ դարից: Իսկ 19-րդ դարի 90-ականներից սկսած՝ հայտնի պատճառներով պատմական Հայաստանից նորանոր հոսքեր էին գալիս այստեղ: Կառուցվում են ամբողջական բնակավայրեր, փողոցներ և թաղամասեր, տներ և շենքեր, եկեղեցիներ ու դպրոցներ... ու սփռվել են անհամար գերեզմաններ՝ հայտառ, հայախաչ, հայապատկեր:

Կրասնոդար քաղաքի պատմության մեջ ևս հստակ նշանակություն է հայկական ծեռագիրը՝ ճարտարապետությունից մինչև կենցաղ: Կենտրոնական փողոցների տասնյակ շենքերի նորածն շարքի տակ դեռ նշանավոր է շինարարության ու նախաքանդակների հայկական ոճը:

Այստեղ դեռ նախախորհրդային շրջանում գործում էին հայկական եկեղեցի և ամենօրյա դպրոցներ, տպագրվում էին թերթեր: Ազգային կուլտուրը վերացնելու խորհրդային համահարթման մասնիչի տակ շատ բան վերացավ և կորուսվեց: 80-90-ականների թարմ հոլմերի թևերով հայրենամարտի մարտիկ, որոնց մի ամսը իրենց գերդաստաններով բնիկներ էին, երկուհարյուրամյա այս քաղաքում ստեղծեցին որոշ ազգային կառույցներ, որոնք շուտով համախմբվեցին Արցախի ազատագրական պայքարի և նորանկախ Հայաստանի Հանրապետության կայացման գործի շուրջ:

Հիմնադրվեց «Մաշտոց» միությունը՝ իր թերթով և հանրակրթական ցանցում բացվեցին հայոց լեզվի խմբակներ, եռանդուն ջանքերի արդյունքում ձեռք բերվեց բավականին ընդարձակ մի հողակտոր, ուր տեղադրվեց առաջին խաչքարը:

Փոխվեց կյանքը, հին մարդկանց փոխարինեցին նորերը, խաչքարը դարձավ եկեղեցի, հիմնադրվեց համբավ ունեցող «Երկրամաս» թերթը, հրատարակվեցին գրքեր ու ամսագրեր, կառուցվեց Առաջնորդարանի հյուսիսային շենքը,

կազմավորվեցին հայապահպան կենտրոններ, կառուցվեց երկրորդ եկեղեցին, կիրակնօրյա դպրոցը դարձավ երկու, դրվեցին մայր տաճարի և քառահարկ դպրոցի հիմքերը:

Ինչքան էլ փորձենք գանազանել այսօր լավն ու վատը, միևնույն է, ունենք այն, ինչ ունենք. երկու փողոցի պետություն, մի ընդարձակ Ափյուռք, որի մի ճյուղն էլ Կրասնոդարի հայկական կյանքն է: Այստեղ ապրում ու դժբախտա-

րին, հունվարին, ապրիլին: Աշակերտների թիվը տատանվում է 120-150: Սովորողները ուսումնասիրում են ժամանակակից հայոց լեզու, գրականություն, հայ ժողովրդի պատմություն, մի խոսքով՝ հայրենագիտություն: Յուրաքանչյուր խումբ դասի է գալիս շաբաթական 1-2 անգամ: Խմբերը կազմված են 8-12 սովորողներից: Խմբերն ունեն իրենց անվանումները. «Փոքր Միեր», «Սասունցի Դավիթ», «Մեսրոպ Մաշտոց», «Տիգրան Մեծ», «Մեծ Միեր», «Նարեկացի», «Գ. Նժդեհ», «Անդրանիկ» և այլն:

«Արմատ» դպրոցը սերտ համագործակցության մեջ է ՀՀ կրթության և գիտության ու Ափյուռքի նախարարությունների հետ, մասնակցում է համահայկական բոլոր միջոցառումներին: Դպրոցի երեք ուսուցիչները՝ Ե. Հարությունյանը, Մ. Հովհաննիսյանը և Ա.Երեմյանը, տարբեր տարիների արժանացել են «Մայրենիի պաշտպան» համահայկական մրցույթի 1-ին կարգի մրցանակի: Դպրոցի աշակերտները չորս անգամ գլխավոր մրցանակ են շահել «Մենք եղել ենք, կանք ու կլինենք»



բար համալրվում է ու զարգանում հայկական կյանքը:

Հայ Առաքելական եկեղեցու հարավային Ռուսաստանի Հայոց թեմին առընթեր գործում է «Արմատ» կիրակնօրյա դպրոցը (նախկինում՝ «Խաչքար»), որը գտնվում է Հովհաննես Ավետարանիչ եկեղեցու ծառագարդ բակում: Այն գործում էր «Խաչքար» ամսագրին զուգահեռ 2007 թվականից՝ բարերար Անդրեյ Անտոնովի օժանդակությամբ: Ամսագիրն ունեցավ 5 տարվա կյանք, իսկ դպրոցը շարունակում է իր 7-րդ ուսումնական տարին: Դպրոցը չնայած կոչվում է կիրակնօրյա, աշխատում է շաբաթը հինգ օր: Այստեղ ընդունելությունը կատարվում է երեք անգամ՝ սեպտեմբեր-



գրական ստեղծագործության համահայկական մրցույթում ու արժանացել պատվոգրերի:

Դպրոցում բոլոր նշանավոր տարեվերջի առիթով կազմակերպվում են գրական-գեղարվեստական միջոցառումներ: Սովորողների սերը

դեպի հայ ժողովուրդը, հայրենի հողը, դեպի մայրենին ակնհայտ ու թափանցիկ է դառնում առանձնապես այդ միջոցառումների ժամանակ:

Մեծ եղեռնի 100-րդ տարելիցի կապակցությամբ առաջին միջոցառումների շրջափուլը «Վարդանյան» կրթամշակութային կենտրոնում եզրափակեց «Արմատ» դպրոցի կազմակերպած եղիշե Չարենցը և եղեռնաշուկա ժամանակը՝ գրական երեկոն:

Կենտրոնի հյուրասարահուն հավաքվել էին «Արմատ» դպրոցի ավագ խմբերի աշակերտներ, ուսուցիչներ, հոգևորականներ, ռուսերեն ստեղծագործող հայ գրողներ, ծնողներ: Սրահ մտնելով ու տեսնելով այդքան մեծ բազմություն՝ եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Հարություն Բայադյանը անչափ ուրախացավ ու ասաց. «Այս ինչքան Չարենց սիրողներ կան մեզ մոտ»:

Երեկոն բացեց կենտրոնի տնօրեն Տեր Սարգիս Թաշճյանը, ապա դպրոցի ուսմասվար Երազիկ Հարությունյանը պարզաբանեց երեկոյի խորհուրդը՝ ասելով, որ եղեռնի հարյուրամյակը ոգեկոչող միջոցառումների շրջափուլը հարմար են գտել շարունակել Չարենցին նվիրված երեկոյով:

Այնուհետև «Մեծ Միեր» դասարանի աշակերտները քայլ առ քայլ, պատում առ պատում, ասումներով ու երգով արժևորեցին եղիշե Չարենց -երևույթը: Լսարանը երեք ժամ շարունակ ապրում էր Չարենցի աշխարհում: Սովորողներն արտասանում էին իրենց սիրած ու ընտրած բանաստեղծությունները՝ «Լուսամտի փի պես աղջիկ», «Ես իմ անուշ Հայաստանի», «Մայր իմ անուշ ու անգին», «Մահվան տեսիլ» և այլն: Վերջում ցուցադրվեց վերջերս նկարահանված «Մահվան տեսիլ» ֆիլմը:

Երեկոյի վերջում բոլորը միասին եզրափակեցին «Ես իմ Մասիս սարն եմ սիրում», «Մենք գալիս ենք դարերից ու գնում ենք հաղթական դեպի դարերը նորից, դեպի վառվող ապագան» տողերով:

Ներկայացրեցին հիացած ու զարմացած էին, ուրախ, որ ռուսախոս այդ պատանիների մեջ այդքան մեծ սեր կա դեպի մայրենին:

Միջոցառման վերջում Հայոց թեմական խորհրդի անդամ, բարերար Կարեն Գրիգորյանը շնորհակալություն հայտնեց դպրոցի ուսմասվար Երազիկ Հարությունյանին՝ նրա հայրենամարտի, անխոնջ ու քրտնաջան աշխատանքի համար:

Էմմա ԲԱԼԱՅԱՆ  
Գ. Աշան

ՀՐԱԺԵՏ ԱՅԲԲԵՆԱՐԱՆԻՆ

Ապրիլի 4-ի առավոտը խորհրդավոր ու հաճելի ապրումների օր էր Մարտունու շրջանի Սոսի Հայկ Հակոբյանի անվան միջնակարգ դպրոցի մի խումբ փոքրիկների և նրանց դասվար Ռիմա Պետրոսյանի համար: Հավաքվել էին ուսուցիչներ, ծնողներ, աշակերտներ, դպրոցի նախկին սաներ՝ ակնատեսը լինելու առաջին դասարանցիների Այբուբենի տոնին: Աշակերտները հագել էին տոնական հագուստներ, դասարանը զարդարել փուչիկներով, ծաղիկներով, իսկ պատից թռեցներին էր նայում Մեսրոպ պապի մեծադիր նկարը. ամեն ինչ պատրաստ էր միջոցառման մեկնարկի համար:

Միջոցառումը սկսվեց այբուբենին նվիրված երգով, հաջորդեց սլոյդ շոու՝ դասարանի աշակերտների նկարներով, ապա ներս եկան աշակերտները՝ կազմելով «Այբբենարան»: Առաջին դասարանցիների համար գիտելիքների անսպառ շտեմարան, հույզերի աղբյուր և մեծ հեղինակություն է Ռ. Պետրոսյանը, ով բացման խոսքով հանդես գալով նշեց, որ մանկավարժի համար ինչքան տառապալից, բայց և միաժամանակ երանելի աշխատանք է ներթափանցել առաջին դասարանցու «անմշակ հոգին», դարձ-

նել նրան գրաճանաչ: Իր աշխատանքի լավագույն գնահատականը համարեց այսօրվա ցերեկույթ-միջոցառումը:

Այնուհետև միջոցառմանը առանձնահատուկ համ ու հոտ հաղորդեցին առաջին դասարանցիները՝ իրենց երգ ու պարով, տպավորիչ արտասանություններով, դերասանական խաղով: Հատկապես ուշագրավ էր համառ արքայադուստրը, ով ոչ մի կերպ չէր ցանկանում սովորել այբուբենի տառերը, սիրում էր ամհոգ ապրել, երգել ու պարել: «Անքանագի երգ»-ը կատարեցին Դիանան, Ինեսն ու Սրեն: Ներկայիցին աշխուժություն պատճառեց «Բզեզի դպրոց»-ի ինքնատիպ ու նորօրյա մատուցումը:

Երեխաների ամենը ու վախվորած աչիկները, մանկական հայացքներն ու ժպիտները տարիների խորքից հուշերիս մեջ արթնացրին այն պահը, երբ ինքս էի հրաժեշտ տալիս Այբբենարանին՝ սիրտս լցնելով մեղմ տխրությամբ: Հիրավի՝ բոլոր ներկայիցներն էլ մի ակնթարթ վերապրեցին իրենց մանկությունը:

Անուշ ՄԱՆԱՍՅԱՆ  
ԱրՊՀ մանկավարժություն,  
մագիստրատուրա 1-ի կուրս

Քաղաքալի շրջկենտրոն Բերձորի Վ. Թեքեյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցի առաջին դասարանում սովորում է 15 աշակերտ: Մայիսի 6-ին իրենց կրթօջախի դահլիճում նրանք՝ դասվար Վալենտինա Բաղդասարյանի ղեկավարությամբ, ներկայացան «Հրաժեշտ Այբբենարանին» հանդեսով: Սկզբում բոլոր ծաղիկներ էին, մեկը՝ թիթեռ, որ ծաղկեծաղիկ թռչելով՝ ըմբռնվեցին էր գարնան բույրը: Այնուհետև Հայոց գրերին, նրանց ստեղծող Մաշտոցին նվիրված երգերով, ասումներով ներկայացան փոքրիկները՝ իրենց ծնողներին, ուսուցիչներին, հյուրերին հավաստելով, որ արդեն գրագետ են, կարող են կարդալ ու գրել, գիտեն գրի ուժն ու արժեքը: Աշակերտների ելույթին զուգահեռ՝ էկրանին Հայոց գրերին նվիրված տեսաֆիլմ էր ցուցադրվում, որի որոշ հատվածներ կազմակերպիչների ստեղծածն էր: Մաշտոցյան տառ-հնչյուններով էին աշակերտները ներկայացնում իրենց սիրելի էականներն ու առարկաները, երևույթները: Այսպես՝ Մ-ն սիրելի մայրիկն է, Հ-ն՝ հայրիկը, Պ-ն՝ պապիկը, Տ-ն՝ տատիկը, և այդպես շարունակ: Հանդեսի վերջում փոքրիկները բարեմաղթանք հղեցին ավագ ընկերներին՝ 12-րդ դասարանցիներին, ովքեր շուտով հրաժեշտ են տալու դպրոցին: Իսկ 12-րդիցները նրանց համար նվերներ էին պատրաստել, որոնք հանձնեցին սիրով:



Շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի առաջատար մասնագետ Սիրվարդ Թամազյանը ողջունեց ու շնորհավորեց առաջին դասարանցիներին՝ մաղթելով հաջողություններ, շնորհակալություն հայտնեց դասվարին՝ լավ աշխատելու համար: Բարի երթ ցանկացավ նաև շրջանավարտներին, ովքեր շուտով նոր կյանք կմտնեն:

Ցերեկույթին ներկա էին դպրոցի տնօրեն Անահիտ Քոսակյանը, ուսուցիչներ, աշակերտներ, ծնողներ, հյուրեր:

Զոհրաբ ԸՈՔՈՅԱՆ

ԼՈՒՍԱՐԱՐ  
ԽՄԲԱԳԻՐ  
Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ

Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 3 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 20.04.2015թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: